«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2022

ՆԱԽԱԲԱՆ

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ՄՈՒՀ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ) ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 15

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 20

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 23

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 27

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 35

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 42

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 49

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 57

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 63

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 69

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 74

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 78

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 85

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 86

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 86

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 88

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 91

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 93

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 94

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 95

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը նկատի է ունեցել, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի առաքելությունը հանրային և մասնավոր հատվածի պահանջներին համապատասխան սոցիալական և տնտեսական ոլորտների համար միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի, շարունակական լրացուցիչ կրթության իրականացումն է: Քոլեջն իրեն համարում է այնպիսի ուսումնական հաստատություն, որի հիմնական խնդիրը ֆորմալ և լրացուցիչ կրթության միջոցով զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության ոլորտն այնպիսի մասնագետներով ապահովելն է, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով կաջակցեն ՀՀ տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող զբոսաշրջության, սննդի արդյունաբերության և սպասարկման ոլորտի զարգացմանն ու կայացմանը: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը բարձր նշաձող է սահմանել եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու, կառավարման գործընթացում այդ համակարգի ընթացակարգերը ներդնելու, քոլեջի կաբինետ-լաբորատորիաները վերազինելու, նյութատեխնիկական բազան նորանոր ռեսուրսներով հարստացնելու նպատակները սահմանելիս: Դրան զուգահեռ՝ արտաքին և ներքին շահակիցները ներգործող մասնակցություն չեն ունեցել քոլեջի ՌԾ-ի մշակման, նպատակադրումների ձևակերպման, խնդիրների մատնանշման գործում: Նշյալի համատեքստում հարկ է փաստել, որ ներքին և արտաքին շահակիցների որոշ առաջարկություններ արդեն-իսկ ներդրվել են ՄԿԾ-ների ուսումնական պլաններում:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն իրականացնում է 8 մասնագիտական կրթական ծրագիր, որոնցից 4-ը վերաբերում են ՀՀ մշակող արդյունաբերության,

[1] Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

մասնավորապես՝ սննդամթերքի և խմիչքների արտադրության ոլորտին, դրանք են՝ «Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Հանրային սննդի տեխնոլոգիա»: Մյուս 4 ՄԿԾ-ները վերաբերում են սպասարկման ոլորտին՝ «Զբոսաշրջություն (դուալ)», «Սպասարկման կազմակերպում», «Զբոսաշրջության ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջի կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են ոչ միայն քոլեջի անվանմանն ու որդեգրած առաքելությանը, այլև ՀՀ տնտեսական զարգացման միտումներին ու աշխատաշուկայի պահանջներին, ինչի արդյունքում ուսանողների թվաքանակը տարեցտարի ավելացել է: Եթե 2015թ. քոլեջում սովորում էին 491 ուսանող, ապա 2022թ. սովորում են 1074 ուսանող: Փորձագիտական խումբը դրականորեն ընդգծում է, որ 2020-2021թթ. տվյալներով քոլեջի շրջանավարտների 21%-ն է շարունակել է ուսումը բուհերում, իսկ 56%-ն աշխատում է մասնագիտությամբ: Միանշանակ է, որ քոլեջի մասնագիտությունները պահանջարկված են աշխատաշուկայում, ուսանողների հմտություններն էլ ընդհանուր առմամբ համահունչ են աշխատաշուկայի կարիքներին:

Փորձագիտական խումբն իր դրական դիտարկումներն է ներկայացնում առ այն, որ «Հանրային սննդի տեխնոլոգիա» և դուալ ձևաչափով ներդրված «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ների մշակման աշխատանքներում ներգրավված են քոլեջի դասախոսներ և որոշ գործատուներ, թեստային առաջադրանքներ կատարում են գրեթե բոլոր մասնագիտությունների ուսանողները և հստակ է թեստի գնահատման մեխանիզմը, որ 2 տեխնոլոգիական ՄԿԾ-ների գծով ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները գնահատվում են նաև պրակտիկայի վայրի ղեկավարի՝ գործատուի կողմից, և պրակտիկայի վերջնական գնահատականի բաղադրիչները տարբերակված են: Փորձագիտական խումբը գովարժան է համարում, որ քոլեջում իրականացվել են ՄԿԾ-ների որոշ բարելավումներ՝ կապված ընտրովի և նախասիրական առարկաների ներդրման, գործնական դասաժամերի ավելացման, պրակտիկաների գնահատման, ժամանակացույցերի փոփոխության հետ, ուր իրենց մասնակցությունն են ունեցել գործատուները, որոշ դեպքերում էլ՝ դասախոսները: Այդուհանդերձ, ոչ բոլոր մասնագիտությունների գծով են առկա լավարկումներ և գործատուների ու դասախոսների մասնակցություններ, ոչ բոլոր պլանավորումներն են իրականացվել, որի արդյունքում որոշ ՄԿԾ-ների բարելավումները կարող են հապաղել: Փորձագիտական խմբի դիրքորոշումը հստակ է՝ բարելավումների փորձը գեներացնելու և տարածելի դարձնելու պարագայում ՄԿԾ-ների

կառավարումը կբարելավվի։ Միևնույն ժամանակ խնդրահարույց է, որ փորձագիտական խմբի կողմից դիտարկված մասնագիտություններում տեսական պարապմունքները հիմնականում իրականացվում են դասանյութի թելադրումով, ուսումնառության նյութերը տրամադրվում են ըստ անհրաժեշտության, բացի այդ էլ՝ հանձնարարականներն ընդհանուր առմամբ միտված չեն վերլուծությունների և ուսումնասիրությունների իրականացմանը՝ խոչընդոտելով գործնական կարողությունների ամբողջական ձեքբերմանը։ Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում երեք տեխնոլոգիական մասնագիտությունների գործնական պարապմունքները մեկ լաբորատորիայում իրականացնելը, մեկ մասնագիտության համար էլ լաբորատորիան բացակայում է՝ ուղղակիորեն վտանգելով ուսանողների գործնական կարողությունների ամբողջական ձեռքբերմանը։ Հարկ է ավելացնել, որ լաբորատորիաների ոչ բարվոք վիճակով և նյութատեխնիկական ռեսուրսներով չապահովված լինելու պատճառով ուսանողներն իրենց գործնական հմտությունները հիմնականում ձեռք են բերում պրակտիկաների ընթացքում կամ իրենց աշխատանքի վայրերում։ Փորձագիտական խումբը հրատապ է համարում քոլեջի լաբորատոր-ռեսուրսային բազան անհրաժեշտ պարագաներով հագեցնելու խնդիրը՝ ՄԿԾ-ներն արդյունավետ իրականացնելու համար։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն իր ծավալած գործունեության համար ունի բավարար մարդկային ռեսուրսներ։ Քոլեջն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար դասախոսներին աշխատանքի է ընդունում մրցութային կարգով՝ հնարավորություն ստանալով ընդունել առավել մրցունակ և որակյալ կադրերի։ Ըստ ՄԿԾ-ների սահմանվել է դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, դասախոսները դասավանդում են իրենց որակավորմանը համապատասխանող մասնագիտական մոդուլներ/առարկաներ։ Դասախոսական կազմի կայունության տեսակետից փորձագիտական խումբը նշում է, որ դասախոսական կազմի մեծ մասը հիմնական աշխատողներ են և իրենց հիմնական զբաղվածությունը քոլեջում է։ Դրական է, որ վերջին տարիներին ավելացել են երիտասարդ դասավանդողները, և փորձագիտական խումբը լիահույս է՝ նրանք կարող են նպաստել քոլեջում կրթական գործընթացների առաջընթացին։ Հարկ է նշել, որ 60 դասախոսներից միայն մեկն է գործատու-դասավանդող, և մտահոգիչ է, որ 4 տեխնոլոգիական մասնագիտություն ունենալու պարագայում քոլեջը չունի արտադրությունից ներգրավված գործատու-դասավանդողներ և վերջիններիս ներգրավման, շահադրդման քաղաքականություն, որի արդյունքում զգալիորեն կարող են բարելավվել գործնական դասընթացները, ինչպես նաև փորձի փոխանակման արդյունքում կլավարկվեն հիմնական դասախոսների մասնագիտական որակները։

Ինչ վերաբերում է ֆինանսական ռեսուրսներին, ապա հարկ է նշել, որ քոլեջն իր գործունեությունն իրականացնելու համար ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից: Վճարովի սովորող ուսանողների քանակի ավելացմամբ պայմանավորված՝ արտաբյուջեի հաշվին ձևավորված մուտքերը վերջին տարիներին դինամիկ աճ եմ ապահովել, որի զգալի մասն ուղղվում է աշխատակիցների աշխատավարձի հավելումներին՝ հավելավճարների տեսքով: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ հավելավճարների տարբերակման հիմքում դրված չէ որևէ գնահատում, այս առումով ֆինանսների բաշխման տրամաբանությունը հստակ չէ: Ընդհանրացնելով՝ քոլեջի համար առաջնահերթ է ընթացիկ ծախսերի ֆինանսավորումը՝ ուղղված աշխատավարձի և հավելավճարների ֆոնդին (84,2%), շենքերի և կառույցների ընթացիկ նորոգմանը (2,3%), կոմունալ վճարներին (2,3%) և այլն: Վերոնշյալով պայմանավորված՝ ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը համարժեք չէ ՌԾ-ի առաջնահերթություններին՝ խոչընդոտելով քոլեջի հետագա զարգացումը: Տեխնոլոգիական մասնագիտությունների գծով գործնական պարապմունքներ իրականացնելու համար լաբորատորիաների նյութատեխնիկական, հումքային ռեսուրսների նախահաշիվ կազմելու համար ամբիոնների վարիչները պահանջագրեր չեն ներկայացնում: Ավելին՝ գործնական պարապմունքների համար նախատեսված անհրաժեշտ հումքը ուսանողներ են բերում, երբեմն էլ՝ դասախոսները:

Փորձագիտական խումբն իր մտահոգությունն է ներկայացնում առ այն, որ համակարգիչները, լսարանային ֆոնդը սակավ են, ոչ պատշաճ կահավորված, կաբինետ-լաբորատորիաներում անհրաժեշտ սարքավորումներն ու պարագաները բացակայում են: Քոլեջը չունի կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա մասնագիտության համար առանձին լաբորատորիա, ավելին՝ 3 տեխնոլոգիական մասնագիտությունների համար գործնական պարապմունքները կազմակերպվում է գործող 1 լաբորատորիայում՝ այնտեղ առկա սակավ գույքով և ռեսուրսներով: Այս համատեքստում հարկ է նշել, որ առաջանում է լաբորատորիայի գերծանրաբեռնվածություն, ինչը բարձր ռիսկեր է առաջացնում կրթական վերջնարդյունքների ամբողջական ձեռքբերման համար: Խմորման արտադրության տեխնոլոգիայի, սարքավորումների լաբորատորիայում սարքավորումների մեծ մասը չեն շահագործվում և դուրս գրման ենթակա են, գործնական պարապմունքների ժամին իրականացվում է ընդամենը այդ սարքավորումների տեսադիտում: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջը, հատկապես տեխնոլոգիական ՄԿԾ-ների համար ունի անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովվածության խնդիր, որը, որպես նպատակադրում, դրված է եղել 2017-2022թթ. ՌԾ-ի հիմքում: ՌԾ-ն արդեն ավարտման փուլում է, իսկ նշյալ կարևոր նպատակները դեռևս չեն իրագործվել: Քոլեջում ուսանողների թվաքանակի

հետագա ավելացումը, հատկապես՝ տեխնոլոգիական մասնագիտությունների գծով, ռեսուրսների անբավարարության խնդիր կարող է առաջացնել, ուստի աներկբա է այն պնդումը, որ մինչև քոլեջը չիրականացնի կրթական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովելու ռիսկերի գնահատում և կառավարում, վտանգված է հատկապես տեխնոլոգիական մասնագիտությունների ՄԿԾ-ների արդյունավետությունը և նոր ՄԿԾ-ների ներդրումը։

Քոլեջում կառավարչական գործընթացներն ապահովված են փաստաթղթային հենքով, անհրաժեշտ ռազմավարական ծրագրերով, սակայն փորձաքննության արդյունքներն ակնհայտ ցույց տվեցին, որ քոլեջը չի կարողացել արդյունավետորեն իրականացնել ՌԾ-ի այն կարևոր նպատակադրումները, որոնք ներկայումս էլ քոլեջի զարգացման մարտահրավերներն են։ Նշյալի համատեքստում դրական է դիտվում, որ քոլեջի նոր կառավարման խորհուրդը ենթագծել է քոլեջի հետագա զարգացման համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրների շրջանակը, սակայն՝ որքանո՞վ են դրանք բխում ղեկավար կազմի մտադրություններից, դժվար է ընկալել, քանի որ փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածում փորձագիտական խումբը քոլեջի հետագա պլանավորումների վերաբերյալ չի ստացել ո՛չ փաստաթղթային, ո՛չ բանավոր ներկայացվող տեղեկատվություն։ Քոլեջն ինքն է ներկայացրել իր գործունեության 5 տարվա վերլուծությունը, ուր պարզորոշ ներկայացրել է ձգձգված և չլուծված խնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիները, որոնք ընդհանրության մեջ համընկնում են փորձագիտական խմբի դիտարկումներին։ Այդքանով հանդերձ, տեսանելի չեն նախատեսված բարելավումները համարժեք մեխանիզմներով հաջորդ տարվա պլաններում ներառելու վարչական աշխատակազմի ձգտումները։ Փորձագիտական խումբն առավել քան համոզված է, որ առանց կառավարման և վարչարարության արդյունավետ գործիքակազմի ներդրման և կիրառման հնարավոր չէ պատկերացնել քոլեջի հետագա բնականոն զարգացումը։

Դրական է գնահատվում, որ քոլեջում ՈՆԱ գործընթացները մեկնարկել են դեռևս 2015 թ.-ից, սակայն միևնույն ժամանակ որոշակի մտահոգության առիթ է, որ 2015-2021 թթ. ներառող ժամանակահատվածի համար ներկայացված չեն ՈՆԱ գործընթացների իրականացումը հավաստող փաթեթներ։ Դրական դիտելով, որ մեկ տարվա ընթացքում ձևավորվել է 12 անուն հարցում, սակայն հարցումների արդյունքում տեսանելի չեն վերհանված խոշոր խնդիրները։ Բացի այդ՝ հարցադրումների արդյունքում ընդգծված խնդիրները խիստ ընդհանրական են, չկան ամփոփումներ, ինչի կապակցությամբ փորձագիտական խումբն ունի այն դիտարկումը, որ քոլեջի ՈՆԱ գործընթացները շարունակականություն չեն ապահովում, տվյալների հավաքագրման մեխանիզմները սահմանափակ են, առկա չեն խնդիրների լուծման թիրախային հետագծեր և բարելավումներն ըստ պլանների

չեն ընդգրկվում ծրագրային փաստաթղթերում՝ վտանգելով ՈՆԱ գործընթացների արդյունավետությունը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը վերջին տարիներին ուսանողների թվաքանակի դինամիկ աճ է ապահովել, առկա են ուսանողների հավաքագրման գործուն մեխանիզմներ։ Հատկապես գովարժան է քոլեջի Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ստորաբաժանման պատասխանատուի աշխատանքը, որի արդյունքում առկա են շրջանավարտների զբաղվածության մակարդակի աճի ապահովման ցուցանիշներ։ Հետազոտական ոլորտում քոլեջի կատարած աշխատանքների մասին խոսելիս հարկ է նշել՝ բացի այն, որ տեխնոլոգիական մասնագիտությունների գծով հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները բացակայում են, գործատու-գործընկերների հետ էլ առկա չեն նրանց ռեսուրսները համատեղ հետազոտական նպատակներով օգտագործելու համագործակցություններ։ Ընդհանրացնելով, ուսանողների հետազոտահենք և վերլուծական կարողությունները զարգացնելու պահանջով կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, հանձնարարականներ առկա չեն քոլեջում, տեխնոլոգիական մասնագիտությունների գծով կան վերլուծական բաղադրիչի տարրեր պարունակող որոշ աշխատանքներ, սակայն դրանք հատուկենտ են և առկա հաջողված փորձը տեղայնացված չէ քոլեջում։ Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ունի ձևավորված հաշվետվողականության համակարգ, տեսանելի է ներքին հաշվետվողականության ազդեցությունը սկսնակ դասախոսների դասավանդման, նրանց հմտությունների կատարելագործման գործում։ Ինչ վերաբերում է արտաքին հաշվետվողականությանը, ապա քոլեջը սահմանափակվում է ԿԽ-ում ընդգրկված գործատուներով, այն էլ՝ քոլեջի տնօրենը ԿԽ-ի քննարկմանն է ներկայացնում է միայն ֆինանսական հաշվետվությունները։ Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ հասարակությանը տեղեկատվության տրամադրման և գիտելիքի փոխանցման նպատակով քոլեջի բյուջեով հատկացվում են ֆինանսական միջոցներ՝ գովազդների, բուկլետների և տարբեր ԶԼՄ-ներով գործունեությունը լուսաբանելու համար։ Արդյունքում բարձրացել է քոլեջի ճանաչելիությունը։

Ամբողջության մեջ դրական է դիտվում, որ քոլեջն արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված գործընթացներ իրականացնելու ուղղությամբ ունի փորձառություն, համագործակցում է ոլորտի մի շարք խոշոր ընկերությունների հետ, ունի համաձայնագրեր եվրոպական ճանաչված մի շարք կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ։ Փորձագիտական խումբը կարևորում է համագործակցությունների արդյունքում ձեռքբերված

պրակտիկաների անցկացման հնարավորությունները և գործատուների հետ համատեղ դուալ կրթական ծրագրի իրականացումը, որի արդյունքում որոշ մասնագիտությունների գծով մեծ թվով ուսանողներ սովորելու ընթացքում և ավարտելուց հետո աշխատում են իրենց մասնագիտությամբ ոլորտի առաջատար կազմակերպություններում: Այդքանով հանդերձ, քոլեջը կարիք ունի մշակելու և աշխատեցնելու գործատուների հետ համատեղ աշխատելու արդյունավետ մոդելներ:

Փորձագիտական խումբը նաև կարևորում է քոլեջի ջանքերը դասախոսների և ուսանողների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման գործում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

- Աշխատաշուկայում պահանջված մասնագիտությունների առկայությունը:
- Տեխնոլոգիական մասնագիտությունների առկայությունը:
- Ուսանողների թվաքանակի կայուն աճը:
- Իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների առկայությունը:
- Դասախոսական կազմի ներուժի առկայությունը, երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականությունը:
- Արտաբյուջի առկայությունը և ավելացումը:
- Քոլեջի դրական վարկանիշի ձևավորմանը միտված աշխատանքները:
- Միջազգային և տեղական համագործակցությունների լայն շրջանակը:

Հաստատության թույլ կողմերն են.

- Ռազմավարական պլանների չիրագործելիությունը:
- Ռիսկերի կանխատեսման և գնահատման մեխանիզմների բացակայությունը:
- Նախատեսված բարելավումները պլաններում ներառելու մեխանիզմների բացակայությունը:
- Ֆինանսական ռեսուրսների բաշխման ոչ արդյունավետ քաղաքականությունը:
- Ռեսուրսատար ՄԿԾ-ների առկայությունը:
- Արտադրությունից ներգրավված դասախոսների բացակայությունը:
- Տեխնոլոգիական մասնագիտությունների համար ռեսուրսային բազայի անկատարությունն ու սակավությունը:
- Թերհագեցած կաբինետ-լաբորատորիաները, նյութատեխնիկական ռեսուրսների անբավարարությունը:

- ՈԱ գործընթացների անկատարությունը։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

- Գնահատել գործող 2017-2022թթ. ՌԾ-ն, մեկտեղել ներքին, արտաքին շահակիցների վերհանած կարիքների հետ և ներդնել նոր ՌԾ-ի հիմքում։
- Ներքին և արտաքին շահակիցներին ներգրավել նոր ՌԾ-ի մշակման և իրականացման գործընթացներում։
- Գործարկել ՌԾ-ի կատարողական, սահմանել ՌԾ-ի կատարողականի գնահատման քանակական և որակական ցուցիչներ։
- ՌԾ-ի նպատակադրումների և առկա ռեսուրսների շրջանակում գնահատել նոր ՄԿԾ-ների ներդրման ռիսկերը։

Կառավարումն ու վարչարարությունը

- Կանխորոշել ռազմավարական պլանավորման առաջնային խնդիրները։
- Թիրախավորել բարելավումների արդյունքային շրջանակը, ապա պլանավորել գործողությունները։
- Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ քոլեջի ռեսուրսների կայունության ապահովման նպատակով։
- Ներդնել ռազմավարական պլանավորումը քոլեջի գործունեության բոլոր բնագավառներում։
- Մշակել և ներդնել գործունեության արդյունավետության գնահատման գործուն մեխանիզմներ։
- Մշակել նախատեսված բարելավումները առաջիկա պլաններում ներառելու մեխանիզմներ։
- Համադրելի դարձնել երկարաժամկետ և կարճաժամկետ պլանները և դրանց կատարողականների հաշվետվությունները։
- Խթանել ներքին և արտաքին շահակիցների նախաձեռնողականությունը կառավարչական որոշումների կայացմանը։

Մասնագիտության կրթական ծրագրերը

- ՄԿԾ-ների մոդուլներում ընդգրկել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի նկարագրիչներին համահունչ վերլուծական բնույթի հանձնարարականներ։
- Իրականացնել ՄԿԾ-ների շարունակական բարելավումներ՝ այլ քոլեջների նմանատիպ ՄԿԾ-ների մոդուլային ծրագրերի հետ համեմատության հիմքով։

- Վերանայել Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն ՄԿԾ-ի մոդուլային ծրագրերը՝ առաջնահերթություն տալով որակավորմանը համապատասխանող նեղ մասնագիտական մոդուլներին:
- ՄԿԾ-ների շարունակական բարելավումներում հնարավորինս ներդաշնակեցնել և ներդնել ներքին և արտաքին շահակիցների առաջարկները:
- Մշակել և կիրառելի դարձնել դասավանդման և գնահատման մեթոդների ընտրության միասնական մոտեցումները:
- Ներդնել բոլոր մասնագիտությունների համար վերլուծական բաղադրիչ պարունակող պրակտիկաների հաշվետվություններ:

Ուսանողները

- Բարելավել ուսանողների իրավունքների պաշտպանության և կարիքների վերհանման մեխանիզմները՝ Ուսանողական Խորհրդի և Իրավակարգապահական հանձնաժողովի դերի թիրախայնացմամբ:
- Բարելավել ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների, լրացուցիչ պարապմունքների և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմները:
- Ապահովել բոլոր մասնագիտությունների գծով ուսանողների հետազոտական-վերլուծական աշխատանքներում ներգրավվածությունը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

- Դիվերսիֆիկացնել դասախոսներին տրամադրվող հավելավճարները՝ հիմքում ունենալով դասախոսների գնահատման համակարգը:
- Ամբողջականացնել և գործարկել դասախոսների գնահատման գործիքակազմը:
- Կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ և ապահովել դրանց պարբերականությունը:
- Տեխնոլոգիական մասնագիտությունների գծով արտադրությունից ներգրավել գործատու-դասախոսներ:

Հետազոտությունը և զարգացումը

- Գործարկել հետազոտության ոլորտում սահմանված փաստաթղթերը՝ ըստ նախապես պլանավորված գործողությունների:
- Մշակել դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու հստակ մեխանիզմներ:
- Մշտադիտարկել և վերլուծել հետազոտությունների արդյունքները:

- Բյուջեից միջոցներ ազատել հետազոտական բնույթի միջոցառումներ իրականացնելու համար։
- Ստեղծել համագործակցություններ գործատու-գործընկերների հետ՝ նրանց ռեսուրսները համատեղ հետազոտական նպատակներով օգտագործելու համար։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

- Գնահատել և կառավարել կրթական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելու ռիսկերը։
- Ռեսուրսատար տեխնոլոգիական մասնագիտությունների համար պլանավորել նյութատեխնիկական ռեսուրսները և՛ կարճաժամկետում, և՛ երկարաժամկետում։
- Վերազինել լաբորատորիաները՝ ըստ առանձին տարիների վրա ֆինանսական ռեսուրսների հստակ բաշխվածության։
- Ապահովել կաբինետ-լաբորտորիաներն անհրաժեշտ պարագաներով և սարքավորումներով։
- Հանրային սննդի տեխնոլոգիայի լաբորատորիայում ըստ պահանջագրերի ապահովել անհրաժեշտ սննդամթերքի նորմավորումն ու ստացումը։
- Մշակել ֆինանսավորման նոր բանաձևեր՝ բազմազանեցնելով ֆինանսական ռեսուրսների ներգրավման աղբյուրները։
- Հստակ պլանավորել լսարանային ֆոնդ-ուսանողների քանակ համամասնությունը, ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ համապատասխանեցնելով ուսանողների թվաքանակին։
- Ձեռք բերել նոր համակարգիչներ՝ ֆինանսական ռեսուրսների համամասնական բաշխվածությամբ դրանց թիվը տարեցտարի ավելացնելով։
- Մշակել և ներդնել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգ։
- Գործատուների հետ համատեղ գույքի օգտագործման համագործակցություններ ձեռքբերել։

Հասարակական պատասխանատվությունը

- Բարելավել ներքին և արտաքին շահակիցների նկատմամբ հաշվետվողականության համակարգը։
- Պարբերաբար թարմացնել քոլեջի կայքէջը՝ գործարկել հետադարձ կապի ապահովման մեխանիզմները։

Արտաքին կապերը և միջազգայնացումը

- Ակտիվացնել միջազգային համագործակցությունները, վերսկսել գործընթացները:
- Գործարկել ՄԿԾ-ների պրակտիկ հմտություններն ապահովող երկարատև համագործակցային պայմանագրեր:
- Մշակել և կիրառել գործատուների հետ համատեղ աշխատելու արդյունավետ մոդել:

Որակի ներքին ապահովման համակարգը

- Ապահովել ՈՆԱ գործընթացների շարունակականությունը:
- Տվյալների հավաքագրման և ամփոփման համար մշակել այլընտրանքային գործուն մեխանիզմներ:
- Հստակեցնել ՈՆԱ կառույցի և ՈՆԱ աշխատակցի գործառույթները՝ նպաստելով մասնագիտական առաջընթացին:
- Մշակել և ներդնել ՈՆԱ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ:
- Ակտիվացնել արտաքին շահակիցների մասնակցությունը ՈՆԱ գործընթացներին:
- Բազմազանեցնել տվյալների հավաքագրման մեխանիզմները, հարցումները դարձնել թիրախային և խնդիրներ վերհանող:

Արմենուհի Մհերյան
Փորձագիտական խմբի ղեկավար
05.12.2022

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Արմենուհի Մհերյան՝ Տնտեսական գիտությունների թեկնածու, Դոցենտ, Եվրոպական համալսարան, «Կառավարում» ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար.

Քրիստինե Հակոբյան՝ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, Աշխատակազմի ղեկավար, «Կառավարման և տնտեսագիտության» ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ.

Աննա Դաշտոյան՝ Տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, «Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի անդամ.

Ավետիք Խոստեղյան՝ Եվրասիա միջազգային համալսարանի «Կառավարում» բաժնի 2–րդ կուրսի ուսանող, ուսանող-փորձագետ.

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Ռոզա Բաբայանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը և համակարգողի օգնականը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՄՈՒՀ-ն դիմել է ՈԱԱԿ (01.03.2022) ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի, ՄՈՒՀ-ի և ԿԳՄՄՆ-ի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել հավատարմագրվող ՄԿՈՒ հաստատությունների հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները: Ուսումնական հաստատությունն իրականացրել է փորձնական SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

Քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացրել է 17.06.2022 թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 18 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել:

Նախապատրաստական փուլ

ՄՈՒՀ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,

2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,

3.ՄԿՈւ(Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,

4.նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[2]: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: Զուգահեռ հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր մասնագիտական ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

[2] Փորձագիտական այցի ժամանակացույց

Նախանական այց

2022 թվականի սեպտեմբերի 2-ին տեղի է ունեցել նախապատրաստական այց ՄՈՒՀ: Հանդիպմանը ներկա են եղել ՈԱԱԿ համակարգողը, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2022թ. Սեպտեմբերի 12-ից 15-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցի համաձայն՝ փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր փորձագետների հետ քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները,ՄՈՒՀ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է ՄՈՒՀ-ի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների[3] դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է հաստատության ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, ռեսուրսների դիտարկման և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների

[3] Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ռեսուրսներ

արդյունքում: Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա փորձագիտական խումբը պատրաստել է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ հոկտեմբերի 27-ին:

Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ներկայացվել է ՄՈՒՀ-ին 27.10.2022թ.-ին:

Զեկույցի վերաբերյալ իր արձագանքը քոլեջն ուղարկել է ՈԱԱԿ 11.11.2022-ին: Ուսումնասիրելով փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը՝ քոլեջը չի ներկայացրել առարկություններ: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 02.12.2022-ին:

Ռոզա Բաբայան

Փորձագիտական խմբի Համակարգող

05.12.2022թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն. «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1943 թ.-ին «Սննդի արդյունաբերության տեխնիկում» անվանումով: 16.09.2002 թ.-ից ՀՀ ԿԳ նախարարի N 447-Մ հրամանով «Սննդի արդյունաբերության տեխնիկում»-ը վերանվանվել է «Երևանի սննդի արդյունաբերության պետական քոլեջ»: 15.05.2006 թ.-ից ՀՀ ԿԳ նախարարի 15.05.2006 թ.-ից N 357-Ա հրամանով «Երևանի սննդի արդյունաբերության պետական քոլեջ»-ը վերանվանվել է «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի: Շրջանավարտներին տրվում է ՀՀ պետական նմուշի դիպլոմ: 2006 թվականին քոլեջը վերանվանվել է Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան արտոնագրվել և ներդրվել են 2 նոր ՄԿԾ-ներ՝ «Զբոսաշրջություն», «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» մասնագիտություններ:

Կրթություն.Քոլեջը իրականացնում է 8 մասնագիտության կրթական ծրագեր հետևյալ մասնագիտություններով՝ շնորհելով համապատասխան որակավորումներ.

1.«Սպասարկման կազմակերպում»- Մենեջեր՝ սպասարկման ոլորտի
2.«Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»-Մենեջեր՝ զբոսաշրջության ծառայությունների սպասարկման
3.«Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»-Գործավար
4.«Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա»-Տեխնոլոգ՝ հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի արտադրության
5.«Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն»-Տեխնոլոգ՝ խմորման արտադրության և գինեգործության
6.«Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա»- Տեխնոլոգ՝ կաթի և կաթնամթերքի արտադրության
7.«Հանրային սննդի տեխնոլոգիա»- Տեխնոլոգ՝ հանրային սննդի պատրաստման
8.«Զբոսաշրջություն» դուալ ուսուցմամբ-Մասնագետ՝ զբոսաշրջային ծառայությունների մատուցման

2022-2023 ուս. տարվանից ներդրվել է նոր ՄԿԾ՝ «Լոգիստիկայի կազմակերպում» մասնագիտությունը՝ փորձարարական դուալ ուսուցմամբ–Լոգիստիկայի կառավարիչ որակավորմամբ:

Հետազոտություն: Քոլեջն իրականացնում է ուսումնառության հետ փոխկապված հետազոտական գործունեություն՝ համապատասխան երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ռազմավարական ծրագրերով, որոշակի ընտրված ուղղություններով և մեթոդներով, արդյունքների վավերացմամբ, որոնք ներկայացվում են բաց դասերի, զեկուցումների, կլոր սեղանի շուրջ զրույցների, համաժողովների, շնորհանդեսների, հրատարակումների ձևով, ՏՏ-ի և այլ միջոցառումների միջոցով, արտահայտում դասախոսների և ուսումնառողների հետաքրքրություններն ու հավակնությունները՝ նպաստելով ուսումնառողների մոտ տարբեր աղբյուրներից օգտվելու փաստագրական նյութեր հավաքագրելու, վերլուծական աշխատանքներ կատարելու ունակությունների ձեռքբերմանը, քննադատական մտքի զարգացմանը և խրախուսվում են՝ համաձայն երիտասարդների հետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականության:

Միջազգայնացում. Կրթական գործընթացն իրականացնելու նպատակով Հայ-հունական քոլեջը կնքել է մի շարք պայմանագրեր ու հուշագրեր՝ համագործակցություն հաստատելով գործատուների, տեղական ուսումնական հաստատությունների, հիմնադրամների և այլ կազմակերպությունների հետ, ինչպես նաև արտասահմանյան ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ: Մասնագիտական պրակտիկայի անցկացման և փորձի փոխանակման առումով քոլեջն արձանագրել է որոշակի հաջողություններ միջազգային հարթակում: Հայ-հունական քոլեջը կարևորում է միջազգային առաջավոր փորձի ներդրումը և փոխանակումը, ուստի նախատեսում է իրականացնել կրթական միջավայրի բարեփոխումներ, որտեղ դասախոսական կազմը և ուսանողները ներգրավված կլինեն միջազգային մակարդակում գիտելիքի ստեղծման և փոխանցման գործընթացներում՝ հնարավորություն ընձեռելով ներգրավել նաև օտարերկրյա ուսանողների:

Որակի ապահովում. Քոլեջն ունի որակի ներքին ապահովման համակարգ. 1.0 հաստիքով պատասխանատու, վարչադասախոսական, ուսանողական հանձնաժողովներ և ընդհանուր աշխատանքների համակարգող՝ տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով, որոնց աշխատանքը ՈՆԱ քաղաքականության շնորհիվ նպատակաուղղված է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների մշտադիտարկմանը, փոփոխությունների կառավարմանը և շարունակական բարելավմանը՝ ձևավորելով ՈՆԱ մշակույթ, որը ենթադրում է

թափանցիկություն, կարիքների բացահայտում, հասարակական պատասխանատվություն, հետազոտական աշխատանքների իրականացում, հաշվետվողականություն, ՊԻՍԲ շրջափուլ մեթոդոլոգիայով իրականացվող գործառույթների/կառավարում, դասավանդում, ուսումնառություն/ և դրանց մարդկային, նյութական, ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության ներքոլեջային վերահսկողություն:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն:*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր:

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը ձևակերպված է 2017-2022թթ. Ռազմավարական երկարաժամկետ ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի առաքելությունն է՝ հանրային և մասնավոր հատվածի պահանջներին համապատասխան սոցիալական և տնտեսական ոլորտների համար միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի, շարունակական լրացուցիչ կրթության իրականացումը: ՌԾ-ում ամրագրված են ուսումնական հասատատության ուժեղ և թույլ կողմերը: Վերջիններս, ինչպես նաև առանձնացված 8 հիմնախնդիրներն ընդհանուր առմամբ դրվել են ՌԾ-ով սահնմանված նպատակների և խնդիրների հիմքում: ՌԾ-ով սահմանված նպատակադրումները 7-ն են, որոնց հասնելու համար առանձնացված են 13 խնդիր և դրանց լուծման անհրաժեշտ քայլերը:

ՌԾ-ում ներկայացված են քոլեջի տեսլականը, արժեքները և գործունեության սկզբունքները: Ըստ ՌԾ-ի՝ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն այն պետական ուսումնական հաստատությունն է, որի հիմնական խնդիրը ֆորմալ և լրացուցիչ կրթության միջոցով զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության ոլորտն այնպիսի մասնագետներով ապահովելն է, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով աջակցեն ՀՀ տնտեսության համար շատ կարևոր նշանակություն ունեցող զբոսաշրջության, սննդի արդյունաբերության և սպասարկման ոլորտի զարգացմանն ու կայացմանը: Քոլեջի կողմից իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի անվանմանն ու առաքելությանը, դրանք են՝ «Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Զբոսաշրջություն (դուալ)», «Սպասարկման կազմակերպում», «Զբոսաշրջության

ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»: Քոլեջի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությամբ քոլեջի առաքելության և նպատակների վերանայումը (ներառում է նաև նոր ՄԿԾ-ի ներդրումը) ենթադրում է լրացումներ և փոփոխություններ կանոնադրության մեջ և ռազմավարական ծրագրերում: 2022-2023 ուստարվանից, ըստ քոլեջի տրամադրած փաստաթղթերի, ներդրվել է «Լոգիստիկա (որակավորումը՝ լոգիստիկայի կառավարիչ)» ՄԿԾ-ն: Հարկ է նշել, որ ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից տեղերն իջեցվել են «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների, որակավորումը՝ լոգիստիկայի կազմակերպիչ)» մասնագիտության համար: «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտացման օրինակելի ուսպլանում ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներից ընդամենը 4-ն են ընդգրկված քոլեջի կողմից ներկայացված «Լոգիստիկա» ծրագրում (Լոգիստիկայի հիմունքներ, Միջպետական փոխադրումներ, Միասնական տրանսպորտային համակարգեր, Ռիսկերը և ապահովագրությունը տրանսպորտում):

Ձևակերպված առաքելություն-սահմանված նպատակներ-իրականացվող ՄԿԾ-ներ շղթան համահունչ է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին: Փորձագիտական այցից կարելի է փաստել, որ քոլեջում իրականացվող կրթական գործունեությունն ընդհանուր առմամբ բխում է ՌԾ-ով սահմանված նպատակներից ու խնդիրներից: Քոլեջը բարձր նշաձող է սահմանել որոշ նպատակներ ձևակերպելիս, մասնավորաբար՝ ինտեգրվել եվրոպական կրթական համակարգին և քոլեջի կառավարման գործընթացում ներդնել այդ համակարգի ընթացակարգերը, վերազինել քոլեջի կաբինետ-լաբորատորիաները, հարստացնել նյութատեխնիկական բազան նորանոր ռեսուրսներով:

Քոլեջն առանձնացրել է իր արտաքին և ներքին շահակիցներին, տարբերակել ու ամրագրել է շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ մշտադիտարկում, հարցումներ, ստուգումներ, դասալսումներ, դասախոսների ատեստավորում, սերտ կապ շրջանավարտների հետ, հանդիպումներ քոլեջի սոցիալական գործընկերների, ՀՀ և արտերկրի առաջատար մասնագետների հետ, մասնակցություն ՀՀ և արտերկրի տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին, համաժողովներին և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերոնշյալ մեխանիզմներից ոչ բոլորն են իրականացվում, ավելին՝ միայն հարցումների իրականացումն է ապահովում որոշակի պարբերականություն, որոնց վերլուծություններն էլ հստակ ամփոփումներ չեն պարունակում: Հարկ է նշել, որ որևէ փաստ առկա չէ, որ ներքին և արտաքին շահակիցներն ունեցել են գործուն մասնակցություն ՌԾ-ի մշակման,

նպատակադրումների սահմանման, խնդիրների ձևակերպման գործում: Նշյալի համատեքստում տեղին է փաստել, որ ներքին և արտաքին շահակիցների որոշ առաջարկություններ ներդրվել են ուսումնական պլաններում, մասնավորապես՝ ընտրովի, նախասիրական առարկաների ներդրում, ժամաքանակների փոփոխություններ:

Քոլեջի 2018-2022թթ. միջնաժամկետ և 2016-2018թթ. կարճաժամկետ ՌԾ-ներում ներառված են ժամանակացույց-պլաններ, ուր նշված են գործողության բովանդակությունը, կատարման ժամկետները, պատասխանատուները: Ժամանակացույց-պլանների կատարողականներ, որով հնարավոր կլինի չափել ՌԾ-ի բաղադրիչների իրականացման արդյունավետությունը, առկա չէ: Փաստ է՝ քոլեջը չի իրականցնում ՌԾ-ով սահմանված ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետության գնահատում՝ ըստ ձեռքբերված արդյունքների չափումների, բացակայում են այն վերլուծությունները, որոնց արդյունքում կթիրախավորվեին 2017-2022թթ. ՌԾ-ով սահմանված կարևոր նպատակադրումների չիրագործման պատճառները: ՌԾ-ով ձևակերպված խնդիրների ամփոփումը ներկայացված է 5 տարվա վերլուծության տեսքով, ուր ընդհանրական կարգով նկարագրված են քոլեջի գործունեության արդյունքները, առանձնացված են բարելավման ենթակա խնդիրները և նախանշված են դրանց հաղթահարման որոշ ուղիներ: Զուգահեռաբար՝ ներկայացված են նաև քոլեջի բարելավմանն ուղղված միջոցառումների և գործընթացների մեխանիզմները, որոնք դասակարգված են ըստ տարբեր ուղղությունների՝ շենքային հենքի, նյութատեխնիկական բազայի, կադրային քաղաքականության և այլն: Նշյալ ուղղություններով առանձնացված չեն բարելավումների հստակ ժամկետները, անհրաժեշտ նվազագույն ռեսուրսները, գործողությունների առաջնային և տրամաբանական հաջորդականությունը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն ունի իր հիմնական գործունեության շրջանակն արտահայտող հստակ և ընկալելի ձևակերպված առաքելություն: Քոլեջում առկա մասնագիտական կրթական ծրագրերից 4-ը վերաբերում են ՀՀ մշակող արդյունաբերության, մասնավորապես՝ սննդամթերքի և խմիչքների արտադրության ոլորտին, 4-ը՝ սպասարկման ոլորտին, դրանով-իսկ ամբողջությամբ համապատասպանելով քոլեջի առաքելությանը: Գովելի է, որ ՌԾ-ով առանձնացված 8 հիմնախնդիրներն ու ամրագրված թույլ կողմերն ընդհանուր առմամբ դրվել են ՌԾ-ի նպատակների և խնդիրների սահմանման հիմքում՝ թիրախավորելով և արժևորելով դրանց իրականացումը:

Քանի որ 2022-2023 ուստարվանից քոլեջում ներդրվել է «Լոգիստիկա» ՄԿԾ-ն և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից տեղերն իջեցվել են «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ըստ տրանսպորտի տեսակների)» մասնագիտության համար, ուստի ՌԾ-ի շրջանակում և առկա ռեսուրսների պայմաններում փորձագիտական խումբը մտահոգված է փորձարարական հիմունքներով ներդրված մասնագիտության հետագա զարգացմամբ: Արդյունքնում կարող է վտանգվել ՌԾ-ով նոր ՄԿԾ-ների ներդրման հետ կապված քոլեջի սահմանած քաղաքականության իրագործման արդյունավետությունը:

Ողջունելի է, որ ձևակերպված առաքելություն-սահմանված նպատակներ-իրականացվող ՄԿԾ-ներ շղթան, համահունչ լինելով ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, ապահովում է քոլեջի կրթական գործունեության համապատասխանությունը ՌԾ-ով սահմանված նպատակներին և խնդիրներին: Սակայն որոշ նպատակադրումների համար քոլեջը բավականին բարձր նշաձող է սահմանել՝ խոչընդոտելով ՌԾ-ի արդյունավետ իրագործմանը:

Դրական է դիտվում, որ տարբերակված են արտաքին և ներքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները, սակայն այդ մեխանիզմներից ոչ բոլորն են պարբերաբար իրականացվում, ու, քանի որ իրականացված հարցումների վերլուծությունները չեն ամփոփվում, չի ձևավորվում արտաքին և ներքին շահակիցների կողմից դուրսբերված քոլեջի զարգացման առաջարկությունների փաթեթը: Առավել ընդհանրացված՝ տեսանելի չեն ներքին և արտաքին շահակիցների կարիքները՝ միտված նոր ՌԾ-ի մշակման աշխատանքներում շահակիցների հետ համատեղ մոդելով աշխատելու հնարավորությունների օգտագործմանը:

Թեև քոլեջն ունի միջնաժամկետ և կարճաժամկետ ՌԾ-ների ժամանակացույց-պլաններ՝ գործողություններով, պատասխանատուներով, կատարման ժամկետներով, սակայն ՌԾ-ի բաղադրիչների իրականացման վերաբերյալ գնահատումների բացակայությունը սահմանափակում է ՌԾ-ով սահմանված նպատակների իրականացման արդյունավետության գնահատման հնարավորությունները, հատկապես, որ 2017-2022թթ. ՌԾ-ով սահմանված որոշ կարևոր նպատակադրումներ չեն իրագործվել: Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ առկա է ՌԾ-ով սահմանված խնդիրների վերաբերյալ ընդհանրական ամփոփումը՝ 5 տարվա վերլուծության տարբերակով, ներկայացված են քոլեջի բարելավմանն ուղղված միջոցառումների և գործընթացների մեխանիզմները, այնուամենայնիվ, առանձնացված բարելավման ենթակա խնդիրները, բարելավմանն ուղղված միջոցառումներն ու գործընթացները չունեն իրականացման հստակ պլաններ՝ սահմանված ժամկետներով, անհրաժեշտ նվազագույն ռեսուրսներով, գործողությունների

հաջորդականությամբ: Արդյունքում, ուղղակիորեն կարող է հապաղել բարելավման ենթակա խնդիրների ժամանակին և ամբողջությամբ լուծումը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ծավալած գործունեությունը համապատասխանում է ՌԾ-ով սահմանված առաքելությանը, համահունչ է Որակավորումների ազգային շրջանակին, քոլեջի սահմանած նպատակներն ու խնդիրներն ընդհանուր առմամբ արտացոլում են շահակիցների կարիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է ***բավարար:***

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր:

ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է: Քոլեջի կառավարումն իրականացվում է հիմնադրի՝ ՀՀ կառավարության, լիազորված մարմնի՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ի, քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի՝ Խորհրդի և քոլեջի գործադիր մարմնի՝ տնօրենի միջոցով: Քոլեջն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, մասնավորապես՝

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով, քոլեջի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով: Քոլեջի կազմակերպական կառուցվածքով կառավարման մարմիններն են՝ Կառավարման խորհուրդը, տնօրինական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, ուսումնամեթոդական խորհուրդը, ուսանողական խորհուրդը:

Որպես քոլեջի կոլեգիալ կառավարման մարմին, կառավարմնան խորհուրդը հաստատում է քոլեջի ռազմավարական ծրագրերը, տարեկան հաշվետվությունները, տարեկան հաշվեկշիռը, ինչպես նաև իրականացնում է քոլեջի կանոնադրությամբ սահմանված այնպիսի կարևոր լիազորություններ, ինչպիսիք են՝ որոշել շահույթի տնօրինման ուղղությունները, տնօրենի առաջարկությամբ սահմանել, կազմակերպել և անցկացնել դասախոսական կազմի մրցույթը, լիազորված մարմնին ներկայացնել քոլեջի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ իր առաջարկությունները, սահմանել մեկ ուսանողի համար ուսման վարձի չափը (համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ): Կառավարման խորհուրդն իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ տնօրենը կառավարման խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում միայն քոլեջի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներկայացվում են նաև լիազորված մարմնին:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի կառավարման խորհուրդն ունի նոր կազմ, որը լիազորված մարմնի կողմից հաստատվել է 13.06.2022թ: Կառավարման խորհրդի կազմում ներգրավվել են նաև նոր անդամներ, որոնք դեռևս քոլեջում իրականցվող գործընթացներին ինտեգրվելու փուլում են: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ կառավարման խորհուրդը կազմակերպված 2 նիստերի ընթացքում արդեն-իսկ ընդգծել է այն կարևոր խնդիրների շրջանակը, որը պետք է դրվի նոր ՌԾ-ի հիմքում, մասնավորաբար՝ ֆինանսական ռեսուրսների ավելացում, պրակտիկ մասնագետ-դասախոսների ներգրավում, գործնական հմտությունների շեշտադրում, լաբորատորիաների հզորացում, գործատուների շրջանակի ընդլայնում, ռեսուրսների համատեղ օգտագործում և այլն: Հարկ է նշել, որ փորձագիտական խմբին չեն ներկայացվել նոր ՌԾ-ի նախագծային տարբերակը և առաջիկա պլանավորումները:

Քոլեջի տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով, քոլեջի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է քոլեջի ընթացիկ գործունեությունը՝ տնօրինելով քոլեջի գույքը և ֆինանսները: Փորձագիտական այցը մեկնարկելու օրը

դադարեցված էին քոլեջի տնօրենի պաշտոնավարման լիազորությունները, ինչը որոշակի դժվարություններ առաջացրեց կառավարման մակարդակում քոլեջի գործունեության պլանային մոտեցումները ընկալելու և գնահատելու համար։

Քոլեջը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, արտաբյուջեն ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից և վարձակալական վճարներից, որը 2021թ. տվյալներով կազմում է քոլեջի բյուջետային մուտքերի շուրջ 26,5%-ը։ Դրամաշնորհային ծրագրեր քոլեջում առկա չեն (դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորում եղել է մեկ անգամ՝ 2019թ.)։ Հարկ է անդրադառնալ, որ վերջին տարիներին մեծացել է քոլեջի արտաբյուջեն՝ ի հաշիվ վճարովի սովորող ուսանողների թվաքանակի ավելացման։ 2021թ. տվյալներով ուսման վարձերից մուտքերը նախորդող տարվա համեմատ ավելացել են շուրջ 2,4 անգամ, ընդամենը եկամուտները՝ 24%-ով։ Եկամուտների ավելացմանը զուգընթաց քոլեջի ծախսերը ևս աճման միտում են ցուցաբերել։ Քոլեջի ծախսերի գերակշիռ մասը՝ 91.3%-ը ընթացիկ ծախսերն են (աշխատավարձ՝ 84,2%, ուսանողական կրթաթոշակ՝ 4,8%, էլեկտրաէներգիա և գազամատակարարում՝ 2,3%)։ Ինչ վերաբերում է աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների ծախսերին, ապա 2021թ. դրանք կազմել են ընդամենը ծախսերի 0,05%-ը, նախորդ՝ 2020թ. համեմատ կրճատվելով 50%-ով։ Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսներին և վարչական անձնակազմին տրվող հավելավճարների բաշխման հիմքում դրված չէ որևէ տրամաբանություն, առկա չեն վճարվող հավելավճարների տարբերակման մեխանիզմներ։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխման տրամաբանությունն ամբողջության մեջ չի արտացոլում ՌԾ-ի առաջնահերթությունները, մասնավորապես՝ ստեղծել նոր լաբորատորիաներ և ուսումնական կաբինետներ, վերազինել քոլեջի կաբինետ-լաբորատորիաները, հարստացնել նյութատեխնիկական բազան նորանոր ռեսուրսներով, կիրառել խրախուսման ճկուն համակարգեր, անդամակցել միջազգային կրթական ծրագրերին և այլն։

Քոլեջի կանոնադրությունն ու առկա կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը։ Սահմանված ընթացակարգերի համաձայն, քոլեջի դասախոսներն ու ուսանողները ընդգրկված են գործող խորհուրդների, հանձնաժողովների կազմում, ներկա են լինում խորհուրդների նիստերին և իրենց քվեարկությամբ մասնակցում են որոշումների կայացմանը։ Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսներն ու ուսանողները գործուն և նախաձեռնողական մասնակցություն չունեն այդ որոշումների կայացմանը։ Որոշումների կայացման հիմքում դրված չեն նաև գործատուների, շրջանավարտների կողմից վերհանված կարիքները։ Շուրջ երեք ամիս առաջ

ձևավորված կառավարման խորհրդի ուսանող անդամները դեռևս հստակ պատկերացում չունեին իրենց գործառույթների շրջանակի վերաբերյալ։

Որպես պլանավորումներ, քոլեջում գործում են՝ 2017-2022թթ. Ռազմավարական երկարաժամկետ ծրագիրը, 2018-2022թթ. Ռազմավարական միջնաժամկետ ծրագիրը և 2016-2018թթ. Ռազմավարական կարճաժամկետ ծրագիրը։ 2017-2022թթ. ՌԾ-ով առանձնացված են նպատակներ, խնդիրներ՝ իրենց լուծման անհրաժեշտ քայլերով։ Առանձնացված են քոլեջի գործունեության 11 ուղղություն, որոնց համար նախանշված են նաև գործունեության բարելավմանը միտված գործողություններ։ Քոլեջում առկա է գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումների ու մեխանիզմների պլանավորում ըստ հետևյալ ուղղությունների՝ շենքային հենքի, նյութատեխնիկական բազայի, ուսումնամեթոդական հենքի, կադրային քաղաքականության, ներքին կարգուկանոնի ապահովման, ֆինանսական ռեսուրսների կառավարման, գործավարության։

Փորձաքննության ամփոփ արդյունքներով պարզ դարձավ, որ ինչպես ՌԾ-ով սահմանված գործողությունները, այնպես էլ քոլեջի կողմից առանձին սահմանված բարելավմանն ուղղված միջոցառումներն ու մեխանիզմները մեծ մասով չեն իրականացվել։ Փորձագիտական խումբը դրանցից առնաձնացնում էլ հետևյալները՝ ստեղծել կաթի և կաթնամթերքի լաբորատորիա, ժամանակակից սարքավորումներով հագեցած խոհանոց, բար, թոնրատուն, մառան, սննդի պատրաստման, պահպանման հնառճ իրերի թանգարան, գինեդարան, ապահովել կաբինետ-լաբորատորիաները անհրաժեշտ գույքով, պարագաներով, սարքավորումներով, նյութերով՝ ըստ սահմանված հագեցվածության նորմերի, ստեղծել հանրային սննդի արագ պատրաստման կետ, բարեկարգել մարզադահլիճը, սննդի պատրաստման լաբորատորիան ապահովել սննդամթերքով, քիմիայի լաբորատորիան ապահովել քիմիական նյութերով, հասնել աշխատավարձի բարձրացմանը՝ ըստ դասախոսի որակական ցուցանիշների, դասախոսական կազմի աշխատանքային գործունեության բազմաչափ գնահատում, մասնագիտական վերապատրաստումների իրականացում, սերտ կապի հաստատում ՀՀ և արտերկրի տարբեր կազմակերպությունների, միությունների համանուն քոլեջների հետ, ֆինանսների ստացում դրամաշնորհային ծրագրերով։

Ինչ վերաբերում է միջնաժամկետ՝ 2018-2022թթ., կարճաժամնկետ՝ 2016-2022թթ. ծրագրերին, ապա միջնաժամկետ ՌԾ-ի ժամանակացույց-պլանով սահմանված գործողություններն ամբողջությամբ չեն բխում երկարաժամկետ ՌԾ-ի 7-րդ գլխով սահմանված քոլեջի գործունեության ուղղություններից։ 2016-2018թթ. կարճաժամկետ ՌԾ-ի ավարտից հետո չեն ամփոփվել ծրագրի կատարողականի արդյունքները, բացի այդ էլ՝ այլ կարճաժամկետ ծրագիր, որը կդրվեր 2018-2022թթ.

միջնաժամկետ ՌԾ-ի հիմքում, ներդրված չէ: Քոլեջի միջնաժամկետ և կարճաժամկետ ՌԾ-ներն ունեն ժամանակացույց-պլաններ, ուր նշված են կատարման ժամկետները, պատասխանատուները: Եթե այդ ժամանակացույց-պլանները չունեն կատարողականների ամփոփումներ, ապա երկարաժամկետ ՌԾ-ի կատարողականն ամփոփված է քոլեջի ներկայացրած 5 տարվա վերլուծության մեջ: Վերլուծությունում ներկայացված են ինչպես 5 տարիների ընթացքում կատարված բարեփոխումները, այնպես էլ ձգձգված ու չլուծված խնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիները: Ընդհանուր համադրության մեջ այդ խնդիրները համընկնում են փորձաքննության արդյունքում դուրսբերված քոլեջի համար առաջնային նշանակություն ունեցող պլանավորված և արդյունքում չիրագործված գործողություններին: Թե որքանո՞վ քոլեջի կողմից իրականացված 5 տարվա վերլուծությամբ դուրսբերված խնդիրների հաղթահարման ուղիները կներդրվեն նոր ՌԾ-ի հիմքում, փորձագիտական խումբը չի կարող ներկայացնել իր դիտարկումը, քանի որ ՌԾ-ի նախագծային տարբերակը և առաջիկա պլանավորոումները չի ներկայացվել փորձագիտական խմբին:

Քոլեջում առկա են տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ (ստորաբաժանումների, կարիերայի կենտրոնի, ամբիոնների, դասղեկների, դասախոսների): Փորձագիտական ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ այդ հաշվետվություններն ընդհանուր առմամբ նկարագրողական են, որոշ դեպքերում պարունակում են SWOT վերլուծություն, բարելավման պլաններ, առաջարկություններ (ուսումնական գործընթացի հաշվետվություններ), միևնույն ժամանակ քանակական և որակական վերլուծությունների ամփոփումներ չեն պարունակում, քննարկված հարցերը բովանդակությամբ և ժամանակահատվածային կտրվածքով չեն բխում ՌԾ-ի ժամանակացույց-պլաններից, առկա չեն հաշվետվություններով դուրս բերված խնդիրներն ու դրանց լուծումները հաջորդ պլանավորումների մեջ ներդնելու մեխանիզմները:

2021թ.-ից ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվել են որոշ հարցումներ, որոնք ամբողջության մեջ հիմք չեն կարող հանդիսանալ քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կանխատեսման և գնահատման համար: Թիրախային չեն քոլեջի գործունեության վրա ազդող առավել բարձր ռիսկայնությամբ գործոններին հակազդելու մեխանիզմները: Փորձագիտական խումբն առանձնացնում է այն օրինակը, որ նոր ՄԿԾ ներդնելու պարագայում դեռևս առկա չեն պլանավորումներ դասախոսական կազմի ընտրության առումով, ռեսուրսային բազան ևս պլանավորված չէ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվող գործընթացները, որոնք սահմանված են համապատասխան ընթացակերգերով, հիմնականում ներառում են պլանավորում, իրականացում,

գնահատում փուլերը: Տեսանելի չեն գնահատման արդյունքներով դուրսբերված բարելավումները հաջորդ տարվա պլաններում ներառելու մեխանիզմները: Տեսանելի չէ նաև ղեկավար կազմի՝ բարելավումներ իրականացնելու ձգտումը: Նշյալից բացի, ոչ բոլոր դեպքերում են աշխատանքային պլաններն ու դրանց կատարողականները բովանդակային առումով համընկնում: Տարեկան կտրվածքով դասախոսներն իրականացնում են իրենց գործունեության SWOT վերուծություններ, ուր առկա են նաև բարելավման ենթակա քայլերը, սակայն այդ բարելավումների հետագա դիտարկում և գնահատում չի իրականացվում:

Քոլեջում իրականացվող 12 անուն հարցումներն իրենց մեջ ներառված հարցերով ընդհանուր առմամբ չեն կարող ամփոփել ՄԿԾ-ների արդյունավետության գնահատումները: Հարկ է նշել, որ շրջանավարտների և գործատուների հարցումներից դուրս են բերվել իրատեսական առաջարկներ, որոնց՝ պլանավորումների մեջ ներառվելու դեպքերը և մեխանիզմներ փորձագիտական այցի ընթացքում չի արձանագրվել:

Քոլեջն իր պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, գովազդների, բուկլետների, ցուցապաստառների միջոցով հրապարակային է դարձնում տեղեկատվությունը կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ: Շրջանավարտների և նրանց հաջողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված և տեղադրված չէ:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կանոնադրության համաձայն քոլեջի կառավարման խորհուրդը հաստատում է ռազմավարական ծրագրերը, տարեկան բյուջեն, հաշվետվությունները, իրականացնում է վերահսկողություն տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ, այդուհանդերձ կառավարման խորհրդի կողմից հաստատված ՌԾ-ի կարևոր նպատակները չեն իրագործվել: Քանի որ տնօրենը կառավարման խորհրդի քննարկմանը միայն ֆինանսական հաշվետվություններ է ներկայացնում, ընթացիկ գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ չի ներկայացնում, ուստի հնարավոր չէ շեշտադրել ՌԾ-ի նպատակների չիրագործման պատճառահետևանքային կապերը և ընդգծել բարեփոխումների արդյունքային շրջանակը, ինչպես նաև իրականացնել արդյունավետ վերահսկողություն տնօրենի ընթացիկ գործունեության նկատմամբ: Արդյունքում վտանգվում է որոշումների կայացման արդյունավետությունը: Դրական է, որ քոլեջի կառավարման խորհուրդն իր նոր կազմով արդեն-իսկ ընդգծել է քոլեջի հետագա զարգացման համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրների շրջանակը, սակայն՝ որքանո՞վ են դրանք համընկնում ղեկավար կազմի մտադրություններին և

հետաքրքրություններին, հստակ չէ, քանի որ նոր ՌԾ-ի նախնական տարբերակը չի դիտարկվել փորձագիտական խմբի կողմից: Փորձագիտական այցը ներառող ժամանակահատվածի դրությամբ քոլեջում ռազմավարական կառավարման գործիքներն արդյունավետորեն չեն դրսևորվում:

Չնայած որ քոլեջը ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, ուսանողների վարձերից և վարձակալական վճարներից, ձևավորված արտաբյուջետային միջոցները վերջին տարիներին ապահովել են դինամիկ աճ՝ նպաստելով քոլեջի ծախսային հոդվածների ավելացմանը, այդուհանդերձ մտահոգիչ է, որ ծախսերի խմբում գերակշիռ մասը շարունակաբար կազմել են ընթացիկ ծախսերը՝ հիմնական մասով ուղղվելով աշխատավարձին և հավելավճարներին: Զուգահեռաբար՝ հավելավճարների բաշխումը տարբերակված չէ, ՌԾ-ի առաջնահերթություններն արտացոլված չեն ֆինանսական ռեսուրսների բաշխման տրամաբանության մեջ: Արդյունքում վտանգված է ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետությունը:

Դրական է, որ քոլեջի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի կառավարման մարմիններում, սակայն անհանգստացնող է, որ վերջիններս իրենց կողմից վերհանված կարիքների ամփոփումներով, համարժեք առաջարկներով չունեն գործուն և նախաձեռնողական մասնակցություն ՌԾ-ի մշակման, առաջնահերթությունների սահմանման գործընթացներում: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ քոլեջի միջնաժամկետ և կարճաժամկետ պլանները չունեն կատարման արդյունքների վերաբերյալ քանակական և որակական վերլուծությունների ամփոփումներ: Դրան զուգահեռ, դրական է գնահատվում, որ երկարաժամկետ ՌԾ-ի կատարողականն ամփոփված է քոլեջի ներկայացրած 5 տարվա վերլուծության մեջ՝ ներառելով ձգձգված ու չլուծված խնդիրներն ու դրանց հաղթահարման ուղիները, որոնք ընդհանրության մեջ համընկնում են փորձագիտկան խմբի նկատառումներին: Այդքանով հանդերձ, փորձագիտական խումբը չունի այն համոզմունքը, որ դրանք ամբողջությամբ կներառվեն նոր ՌԾ-ի նախագծային տարբերակում:

Թեկուզև առկա է քոլեջի գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումների ու մեխանիզմների պլանավորում ըստ տարբեր ուղղությունների, միևնույնն է՝ դրանք առաջնային նշանակություն ունեցող կետերով չեն իրականացվել: Ստացվում է՝ քոլեջում կրթական գործընթացները պլանավորում-կատարողական կապի մեջ կարևոր և առանցքային կետերով չեն համընկնում: Արդյունքում վտանգված է կառավարչական գործընթացների արդյունավետությունը:

Դրական դիտարկելով, որ քոլեջում առկա են տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ, սակայն դրանք ևս քանակական և որակական վերլուծությունների ամփոփումներ չեն պարունակում, քննարկված հարցերը

բովանդակությամբ և ժամանակահատվածային կտրվածքով չեն բխում ՌԾ-ի ժամանակացույց-պլաններից, ու քանի որ առկա չեն հաշվետվություններով դուրս բերված խնդիրներն ու դրանց լուծումները հաջորդ պլանավորումների մեջ ներդնելու մեխանիզմները, խոչընդոտվում է բարելավումների շրջափուլը:

Չնայած որ ներքին և արտաքին շահակիցների շրջանում վերջին մեկ տարվա ընթացքում իրականացվել են որոշ հարցումներ, սակայն դրանք ամբողջության մեջ հիմք չեն քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին ռիսկերի կանխատեսման և գնահատման համար՝ սահմանափակելով քոլեջի գործունեության վրա ազդող առավել բարձր ռիսկայնությամբ գործոններին հակազդելու մեխանիզմների գործողությունը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ձգտումը իր պաշտոնական կայքէջի, ֆեյսբուքյան էջի, գովազդների, բուկլետների, ցուցապաստառների միջոցով կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Շրջանավարտների և նրանց հաջողությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ևս հնարավորություն կտա հանրությանը պատկերացում կազմել քոլեջի տրամադրած կրթության արդյունքների վերաբերյալ:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում առկա է ռազմավարության ռիսկերի կառավարման խնդիր, մասնավորապես՝ ռազմավարական պլանավորման ուղղությամբ առանցքային խնդիրների լուծումները կանխորոշված չեն, ընդգծված չէ բարելավումների արդյունքային շրջանակը, բացակայում են կրթական գործընթացների մշտադիտարկման, գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմները, կրթական գործընթացները պլանավորում-կատարողական կապի մեջ կարևոր և առանցքային կետերով չեն համընկնում, վտանգված է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի

ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է ***անբավարար***:

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն իրականացնում է թվով 8 ՄԿԾ: 2018 թվականից քոլեջում ներդրվել են 3 նոր ՄԿԾ-ներ՝ «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», «Սպասարկման կազմակերպում»՝ դադարեցնելով նմանատիպ «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» ՄԿԾ-ն: Քոլեջում գործում է նաև դուալ ձևաչափով «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ն: Մյուս ՄԿԾ-ները տեխնոլոգիական մասնագիտությունների գծով են՝ «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն», «Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա»: Ընդհանուր առմամբ, ՄԿԾ-ները համահունչ են քոլեջի առաքելությանն ու ձևակերպած նպատակներին և, ինչպես սպասարկման մասանագիտությունները, այնպես էլ տեխնոլոգիական մասնագիտությունները աշխատաշուկայում պահանջված են և ՀՀ տնտեսական զարգացման առաջանահերթությունների շրջանակում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում: Քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին և ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին: Մոդուլային ծրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք ընդհանրական առումով համադրելի են զբաղմունքների նկարագրում նշված ակնկալվող վերջնարդյունքների հետ:

ՄԿԾ-ները կազմվում են ՊԿՉ-ների հիման վրա և ունեն ձևաչափին համապատասխան իրենց մոդուլային ծրագրերը: Որոշ մասնագիտությունների մոդուլային ծրագրերում բացակայում են ծրագրային մանրամասները և քոլեջի կառավարման խորհրդի վավերացումը: Ըստ փաստաթղթային հենքի՝ ՄԿԾ-ների մշակման պատասխանատուներն են դասախոսները, ամբիոնը և ուսումնամեթոդական խորհուրդը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

«Հանրային սննդի տեխնոլոգիա» և դուալ ձևաչափով ներդրված «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ների մշակման գործում ներգրավված են քոլեջի դասախոսները և որոշ գործատուներ: Ինչ վերաբերում է «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» ՄԿԾ-ին, ապա դասախոսները որևէ մասնակցություն չեն ունեցել ՄԿԾ-ների մշակման աշխատանքներին, քոլեջի գործընկեր-գործատուների մասնակցությունը ևս տեսանելի չէ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության մոդուլային ծրագրերը որոշ դեպքերում չեն լրացնում մեկը մյուսին, որոշ մոդուլների մուտքային պահանջները բացակայում են կամ չեն համապատասխանում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը, հավելելով՝ որոշ մոդուլների բացակայությունն էլ չի ապահովում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը: «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» ՄԿԾ-ի համար մասնագիտական տեսանկյունից կարևոր մուտքային պահանջներ են հանդիսանում «Օրգանական և ֆիզիկակոլոիդ քիմիա», «Խաղողագործություն», «Ստանդարտացում, սերտիֆիկացում, չափագիտություն» մոդուլները, որոնք բացակայում են ՊԿՉ-ներում: «Հանրային սննդի տեխնոլոգիա» ՄԿԾ-ում «Ստանդարտացում, սերտիֆիկացում, չափագիտություն» մոդուլը հանդիսանում է մուտքային պահանջ «Հանրային սննդի օբյեկտների տեխնոլոգիական սարքավորումների, սարքերի և պարագաների շահագործում» մոդուլի համար, սակայն ևս նշված չէ: Քոլեջը նշյալ բացթողումների համար չի դիմել ՄԿՈՒԶԱԿ:

Քոլեջում մշակված և փաստաթղթավորված են ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները: Փորձագիտական այցից պարզվեց, որ յուրաքանչյուր դասախոս մշակում է իր մոդուլի վերջնարդյունքների ձեռքբերման դասավանդման և ուսումնառության մեթոդները: Ըստ քոլեջում գործող ընթացակարգերի՝ դասավանդման մեթոդների արդյունավետությունը գնահատվում է ուսանողների առաջադիմությամբ և դասալսումների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ամբիոնների վարիչները ըստ ժամանակացույցի իրականացնում են դասալսումներ, գրանցված արդյունքներն ըստ էության չեն ներառում դասավանդման և ուսումնառության մեթոդների վերլուծություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում չի կիրառվում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն, դրանք հիմնականում կիրառվում են՝ ելնելով մասնագիտական առանձնահատկություններից: Այցի շրջանակում պարզվեց, որ տեսական պարապմունքներն անց են կացվում հիմնականում դասանյութի թելադրումով, ուսումնառության նյութերը տրամադրվում են ըստ անհրաժեշտության: Փորձագիտական խումբը նշում է, որ հիմնականում

տեխնոլոգիական մասնագիտությունների գծով լաբորատորիաները ոչ բարվոք վիճակում են, ապահովված չեն անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով և պարագաներով: Գործող մեկ լաբորատորիայում երեք տեխնոլոգիական մասնագիտությունների գծով իրականացվում են գործնական պարապմունքներ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների գործնական հմտությունների պակասը լրացվում է պրակտիկաների ընթացքում: Բարձր կուրսերի ուսանողները հիմնականում աշխատում են և իրենց գործնական հմտություններն ապահովում են աշխատանքի վայրում:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հանձնարարականներն ընդհանուր առմամբ միտված չեն վերլուծական հմտությունների ձևավորմանը: Դրանք պարզ տեսական գիտելիք և հաշվարկներ ներառող առաջադրանքներ են, որոնք ընդհանուր առմամբ միտված չեն գործնական կարողությունների ձեռքբերմանը: Օրինակ՝ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության «Գարեջրի սարքավորումներ» առարկայի քննական հարցաթերթիկներում ներառված հարցերից մեկը պահեստի մակերեսի հաշվարկ է, ուր տրված է մակերեսի բանաձևը և ուսանողը միայն պետք է տեղադրի թվային միավորներ՝ կատարելով պարզ մաթեմատիկական հաշվարկ, առանց վերլուծելու կամ կարողությունները դրսևորելու: Ինչ վերաբերում է «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության առաջադրանքներին, ապա ուսանողներն իրականացնում են մենյուի և տեխնոլոգիական քարտերի մշակում իրենց ապագա սննդի կետերի համար, ուր որոշ առումներով առկա է վերլուծական բաղադրիչի տարրեր: «Զբոսաշրջություն» մասնագիտության «Զբոսաշրջային ռեսուրսներ» մոդուլի հանձնարարականի հիման վրա ուսումնասիրվել է Հայաստանի հատուկ պահպանության տակ գտնվող տարածքները, ներկայացվել են ռեֆերատներ, ուր առկա չեն վերլուծությունների ամփոփումներ, եզրահանգումներ:

Ըստ քոլեջում գործող «Ուսումնառողների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատման կարգ»-ի՝ ուսումնառության արդյունքները հիմնականում գնահատվում են ՊԿՉ-ներում ներկայացված գնահատման մեթոդների համաձայն: «Հանրային սննդի տեխնոլոգիա» ՄԿԾ-ի մասնագիտական մոդուլների որոշ ուսումնառության արդյունքների կարողությունների գնահատումն իրականացվում է ստուգատեսի միջոցով: Գնահատման միջոցները ներառում են թեստային կամ գործնական առաջադրանքներ, իսկ քննություններն անց են կացվում քննաթերթիկներով: Գնահատումն իրականացվում է 10 միավորային համակարգով: Քոլեջն ունի նաև «Գնահատման բողոքարկման կարգ» և այցի ընթացքում պարզ դարձավ, որ բողոքարկման կարգը չի գործարկվել, և ուսանողները դրա կարիքը չեն ունեցել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեստային առաջադրանքներ կատարում են գրեթե բոլոր մասնագիտությունների

ուսանողները և գնահատվում են դրական, եթե հարցերի 50% և ավելիին ճիշտ են պատասխանել։

«Հանրային սննդի տեխնոլոգիա», «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտությունների ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները գնահատվում են նաև պրակտիկայի վայրի ղեկավարի՝ գործատուի կողմից։ Պրակտիկայի վերջնական գնահատականը ներառում է 3 բաղադրիչ՝ հաշվետվության բովանդակությունը, բանավոր պաշտպանությունը և գործատուի գնահատականը։ Բոլոր մասնագիտությունների գծով պրակտիկայի գնահատման չափանիշներ և գնահատականի ձևավորման առանձին բաղադրիչներ մշակված չեն։ Քոլեջում գործում է «Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող քաղաքականություն»։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ պրակտիկաների հաշվետվություններն ընդհանուր նկարագրողական տեղեկատվություններ են, որոշ հաշվետվություններում բացակայում են օգտագործված գրականության աղբյուրների հղումները, որոշներում էլ պարզ չէ պրակտիկայի վայրը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դուալ ձևաչափով «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողները կարողությունների ձևավորումը փաստող օրագրեր չեն լրացնում, հաշվետվություններ չեն ներկայացնում և՛ քոլեջում, և՛ գործատուի մոտ։ «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ում որոշ մոդուլների գործնական ուսուցումը կազմակերպությունում (ԳՈՒԿ) նպատակահարմար չէ անցկացնել՝ գործատուների ռեսուրսների պակասի, առանձնահատկությունների պատճառով։ Օրինակ՝ «Հասարակական սննդի կազմակերպման ծառայություններ» մոդուլը հնարավոր չէ իրականացնել ո՛չ հյուրանոցում, ո՛չ զբոսաշրջային կազմակերպությունում։

Քոլեջի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին, դրանք իրականացվում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից մշակված և հաստատված ՊԿՉ-ներով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին հինգ տարվա ընթացքում ուսանողների շարժունություն քոլեջների միջև չի գրանցվել, բարձր առաջադիմությամբ շրջանավարտները ուսումը շարունակում են ԵՊՀ-ի, ՀԱԱՀ-ի, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում։ Քոլեջում իրականացված հարցման արդյունքներով 2020-2021թթ. շրջանավարտների 21%-ը շարունակել է ուսումը բուհում, 56%-ը աշխատում է մասնագիտությամբ, 17%-ը գործազուրկ է։ Քոլեջում ՄԿԾ-ների բենչմարքինգ չի իրականացվել։

Քոլեջում գործող ընթացակարգերով յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա սկզբին ՄԿԾ-ների ուսումնական պլանները վերանայվում են՝ որպես հաջորդ ուս.տարվա նախապատրաստական աշխատանք։ Այցի շրջանակում պարզ

դարձավ, որ 2022-2023 ուստարվա համար «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» ՄԿԾ-ի ուսումնական պրակտիկայի անցկացման ժամանակացույցը նախատեսվել է վերանայել և պրակտիկան տեղափոխել սեպտեմբեր ամիս, ըստ որի ուսանողները բացի շշալցման գործընթացից նաև կկարողանան մասնակցել մթերմանը: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների սեպտեմբեր ամսվա պրակտիկան հետաձգվել է:

Քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումն ունեն փաստաթղթային հենք, բացի այդ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Զբոսաշրջություն» և «Հանրային սննդի տեխնոլոգիա» ՄԿԾ-ներում, հաշվի առնելով գործատուների և ՊՈՀ-ի նախագահների կարծիքները և առաջարկները, կատարվել են որոշակի բարելավումներ: Մասնավորապես՝ «Հանրային սննդի տեխնոլոգիա» ՄԿԾ-ում ներդրվել են ընտրովի առարկաներ՝ «Օրգանական գյուղատնտեսություն», «Հումքի նախնական ջերմային մշակում»: «Զբոսաշրջություն» կրթական ծրագիրը ևս վերանայվել է, ներդրվել է «Զբոսաշրջության աշխարհագրություն», «Զբոսաշրջային վիճակագրություն» ընտրովի և նախասիրական առարկաները: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՄԿԾ-ների լավարկման համատեքստում ոչ բոլոր դեպքերում են դասախոսներն իրենց կարծիքներն ու առաջարկները բարձրաձայնում և ներկայացնում ամբիոնների քննարկմանը, մասնավորաբար՝ «Հանրային աննդի տեխնոլոգիա» ՄԿԾ-ի դասախոսները պարբերաբար մասնակցություն են ունեցել ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված ՊԿՉ-ների վերանայման աշխատանքներին, իսկ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» ՄԿԾ-ի դասախոսները որևէ վերանայմանը մասնակցություն չեն ունեցել: Մինչև 2021-2022 ուստարին «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում էր եռափուլ եղանակով՝ գիտելիք (տոմսերով), հմտություններ (տեխնոլոգիական քարտեր կամ մենյու մշակելով), կարողություններ՝ պրակտիկ կերակրատեսակ պատրաստելով: 2021-2022 ուստարում համավարակով պայմանավորված՝ պետական ամփոփիչ քննությունները հանձնել են առանց պրակտիկ ցուցադրման: Վերոնշյալի հետ կապված ՊՈՀ-ի նախագահները հաշվետվություններում առաջարկել են վերանայել կրթական ծրագիրը և առավել ուշադրություն դարձնել պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունների շրջանակում իրականացնում է իր առաքելությանն ու աշխատաշուկայի պահանջներին համահունչ սպասարկման և

տեխնոլոգիական մասնագիտությունների գծով ՄԿԾ-ներ՝ նպաստելով քոլեջի ուսանողների թվաքանակի տարեցտարի ավելացմանը:

Գովելի է, որ «Հանրային սննդի տեխնոլոգիա» և դուալ ձևաչափով ներդրված «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ների մշակման աշխատանքներում ներգրավված են քոլեջի դասախոսներ և որոշ գործատուներ: Դրան զուգահեռ մտահոգիչ է, որ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» ՄԿԾ-ի մշակմանը դասախոսներն ու գործատուները էական մասնակցություն չեն ունեցել, և արդյունքում նշյալ ՄԿԾ-ի մոդուլային ծրագրերը որոշ դեպքերում չեն լրացնում միմյանց, կան մոդուլներ, որոնց մուտքային պահանջները բացակայում են կամ չեն համապատասխանում ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը՝ խոչընդոտելով ակնկալվող վերջնարդյունքների ամբողջական ապահովմանը:

Թեև քոլեջում մշակվել և կիրառվում են ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներ, մեթոդներ, որոնք տարբեր մասնագիտությունների գծով կիրառելության տեսանկյունից միասնական չեն, այդուհանդերձ, ըստ քոլեջում գործող կարգի՝ դասավանդման մեթոդների արդյունավետությունը գնահատող գործիքներից ուսանողների առաջադիմությունն ու դասալսումները լիարժեքորեն չեն գնահատում դասավանդման մեթոդների արդյունավետությունը: Խոսքը վերաբերում է դասալսումների վերլուծություններին, որոնք, որպես դասապրոցեսի նկարագրություններ, խնդիրներ վերհանող չեն, նաև տեսանելի չեն բարելավման հստակ քայլերը: Փորձագիտական խումբը հակված է, որ հստակ բարելավման քայլեր պարունակող դասալսումների վերլուծությունները հետագայում կարող են նպաստել ինչպես սկսնակ դասախոսների դասավանդման փորձի լավարկմանը, այնպես էլ վերհանված հաջողված փորձի տարածմանը: Անհանգստացնող է, որ փորձագիտական խմբի կողմից դիտարկված մասնագիտություններում տեսական պարապմունքները հիմնականում իրականացվում են դասանյութի թելադրումով, ուսումնառության նյութերը տրամադրվում են ըստ անհրաժեշտության, բացի այդ էլ՝ հանձնարարականներն ընդհանուր առմամբ միտված չեն վերլուծությունների և ուսումնասիրությունների իրականացմանը՝ խոչընդոտելով գործնական կարողությունների ամբողջական ձեքբերմանը: Արդյունքում կարող է վտանգվել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչի ամբողջական ձեռքբերումը:

Մտահոգիչ է, որ երեք տեխնոլոգիական մասնագիտությունների ուսանողներն իրենց գործնական պարապմունքներն իրականացնում են մեկ լաբորատորիայում: Փաստ է, որ նշյալ պայմաններում ուսանողները գործնական կարողություններն ամբողջությամբ չեն կարող ձեռք բերել: Հաջորդիվ՝ լաբորատորիաների ոչ բարվոք վիճակով և նյութատեխնիկական ռեսուրսներով չապահովված լինելու պատճառով ուսանողներն իրենց գործնական

հմտությունները հիմնականում ձեռք են բերում պրակտիկաների ընթացքում կամ իրենց աշխատանքի վայրերում: Նշյալի շրջանակում ուղղակիորեն անհրաժեշտություն է առաջանում անհապաղ քայլեր ձեռնարկել քոլեջի ռեսուրսային բազայի վերազինման և անհրաժեշտ պարագաներով ապահովելու համար, հակառակ պարագայում՝ առաջիկայում ՄԿԾ-ների իրագործումը բարձր ռիսկեր կպարունակի:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում, որ գնահատման միջոցները ներառում են թեստային, որոշ դեպքերում էլ՝ գործնական առաջադրանքներ: Հատկանշական է, որ քոլեջում թեստային առաջադրանքներ կատարում են գրեթե բոլոր մասնագիտությունների ուսանողները և հստակ է թեստի գնահատման մեխանիզմը: Ողջունելի է, որ 2 տեխնոլոգիական ՄԿԾ-ների գծով ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները գնահատվում են նաև պրակտիկայի վայրի ղեկավարի՝ գործատուի կողմից, և պրակտիկայի վերջնական գնահատականը ներառում է 3 բաղադրիչ՝ հաշվետվության բովանդակությունը, բանավոր պաշտպանությունը և գործատուի գնահատականը՝ դրանով իսկ նպստելով գնահատման համակարգի տարբերակմանը: Այդքանով հանդերձ, անհանգստացնող է, որ բոլոր մասնագիտությունների գծով պրակտիկայի գնահատման չափանիշներ և գնահատականի ձևավորման առանձին բաղադրիչներ մշակված չեն: Քանի որ «Զբոսաշրջություն» դուալ ձևաչափով ուսումնառող ուսանողների համար օրագրերը հանդիսանում են ինչպես քոլեջում, այնպես էլ գործատուի մոտ կարողությունների ձեռքբերման, գնահատման միջոց, ուստի անհանգստացնող է, որ օրագրեր չեն լրացվում և գործատուի գնահատականը այս պարագայում հաշվի չի առնվում պրակտիկայի գնահատման ժամանակ: Հստակ է՝ պրակտիկաների հաշվետվությունների պահանջը բոլոր մասնագիտությունների համար և դրանց նկատմամբ վերլուծական բաղադրիչի պահանջը էականորեն կբարելավեն ուսանողների գործնական կարողությունները :

Փորձագիտական խումբը դրականորեն շեշտադրում է, որ 2020-2021թթ. տվյալներով քոլեջի շրջանավարտների 21%-ն է շարունակել է ուսումը բուհում, իսկ 56%-ն աշխատում է մասնագիտությամբ՝ ընդգծելով քոլեջում առկա մասնագիտությունների պահանջարկվածությունը և ուսանողների հմտությունների՝ ընդհանուր առմամբ աշխատաշուկայի կարիքներին համահունչ լինելը:

Գովելի է, որ քոլեջում իրականացվել են ՄԿԾ-ների որոշ բարելավումներ՝ կապված ընտրովի և նախասիրական առարկաների ներդրման, գործնական դասաժամերի ավելացման, պրակտիկաների գնահատման, ժամանակացույցերի փոփոխության հետ, ուր իրենց մասնակցությունն են ունեցել գործատուները, որոշ դեպքերում էլ՝ դասախոսները: Այդուհանդերձ, ոչ բոլոր մասնագիտությունների գծով

են առկա լավարկումներ և գործատուների ու դասախոսների մասնակցություններ, ոչ բոլոր պլանավորումներն են իրականացվել, որի արդյունքում որոշ ՄԿԾ-ների բարելավումները կարող են հապաղել: Փորձագիտական խումբը նշում է՝ բարելավումների փորձը գեներացնելու և տարածելի դարձնելու պարագայում կապահովվի ՄԿԾ-ների արդյունավետ կառավարումը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ քոլեջն իրականացնում է իր առաքելությանն ու աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ներ, ակնկալվող վերջնարդյունքներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, առկա են ՄԿԾ-ների բարելավման օրինակներ գործատուների մասնակցությամբ, շրջանավարտների զգալի մասն աշխատում են իրենց մասնագիտությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության,սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է ***բավարար:***

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում ընդունելությունն իրականացվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով՝ հիմնական և միջնակարգ կրթության վկայականի կամ ատեստատի հիման վրա՝ մրցութային կարգով, ըստ սահմանված անվճար և վճարովի տեղերի: Ընդունելության գործընթացի կազմակերպման և կանոնակարգման նպատակով կազմվում է ընդունող հանձնաժողով: Նախնական

ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը ընդունելության մասին տեղեկատվություն տարածում է սոցիալական ցանցերի (ֆեյսբուք, ինստագրամ) միջոցով, ընդունելության կարգի մասին տեղեկատվություն առկա է նաև քոլեջի պաշտոնական կայքէջում (http://www.agc.am/), սակայն կայքէջի թարմացումները պարբերական բնույթ չեն կրում և առկա չէ «դիմորդ» բաժին, որտեղ մանրամասն կնկարագրվեին ընդունելությանը վերաբերող գործընթացները:

2018 թվականին քոլեջն ընդունել է «Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականություն և ընթացակարգեր», իսկ 2020 թվականին՝ «Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականություն և ընթացակարգեր», ինչպես նաև նույն թվականին՝ «Ընդունելության արդարությունը և թափանցիկությունը ապահովող ընթացակարգերը և հիմքերը» փաստաթղթերը: Նշված փաստաթղթերը բովանդակային առումով երբեմն համընկնում են:

Ըստ քոլեջի ինքնավերլուծության, ընունելության գործընթացն ավելի արդյունավետ է կազմակերպվում սկսած 2017 թվականից՝ պայմանավորված մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ստորաբաժանման պատասխանատուի հաստիքի ներդրումով: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ստորաբաժանման պատասխանատուն այցեր է կատարել դպրոցներ, աշակերտներին ներկայացրել ընդհանուր տեղեկություններ քոլեջի գործունեության, կրթական ծրագրերի մասին, սակայն վերջին 2 տարիների ընթացքում գործընթացը կանգ է առել, փոխարենը իրականացվում են «բաց դռների» օրեր, որոնց ընթացքում աշակերտները կարողանում են ծանոթանալ քոլեջի շենքային պայմաններին, նյութական ռեսուրսներին, առկա մասնագիտություններին և այլն: Պատրաստվում են երկլեզու՝ հայերեն և անգլերեն թռուցիկներ, «դիմորդի անկյուն»:

Վերջին 5 տարիներին քոլեջի ուսանողների թվաքանակը աճել է, մասնավորապես 2018-19 ուս. տարում՝ 507 ուսանող /2% աճ/, 2019-20 ուս. տարում՝ 618 ուսանող /22% աճ/, 2020-21-ին՝ 795 ուսանող /29% աճ/, 2021-22-ին՝ 960 ուսանող /21% աճ/, և 2022-23-ին՝ 1074 ուսանող /12% աճ/: Քոլեջում ուսանողների թվաքանակով 3 առաջատար մասնագիտություններն են՝ «Հանրային սննդի տեխնոլոգիա» /336 ուսանող/, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզուների խորացված իմացությամբ» /160 ուսանող/ և «Սպասարկման կազմակերպում» /134 ուսանող/: Ըստ քոլեջի ինքնավերլուծության 2017-22 թվականներին ուսանողների ընդհանուր արտահոսքը եղել է 102, որից 100 ուսանող գնացել են դպրոցներ, նույն թվականներին ուսանողների ընդհանուր ներհոսքը եղել է 79:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը 2018 թվականին ընդունել է «Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր», որում նշվում են այն հիմնական գործընթացները, որոնց արդյունքում վեր են հանվում ուսանողների կարիքները:

Նախնական ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջի կրթության որակի պատասխանատուն պարբերաբար անանուն հարցումներ է իրականացրել վերջին 1 տարվա ընթացքում, սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդ հարցումներին ոչ բոլոր ուսանողներն են մասնակցել: Ուսանողների կարիքների վերհանման գործընթացին մասնակցում են նաև ուսումնական մասը, ուսանողական խորհուրդը և կուրսղեկները:

Ուսանողական խորհրդին անդամակցում են բոլոր կուրսերի ավագները և նրանց օգնականները, որոնք հնարավորություն ունեն իրենց խմբերում եղած խնդիրները, առաջարկությունները ներկայացնել ՈւԽ նիստերում և ըստ անհրաժեշտության վարչական աշխատակազմին, սակայն տարեկան աշխատանքային պլանում հստակ չի առանձնացվում որևէ մեթոդ-միջոցառում, որը միտված կլինի հենց ուսանողների կարիքների վերհանմանը:

Կուրսղեկները ևս, իրենց կուրսերում առկա կարիքները կարող են ներկայացնել վարչական աշխատակազմին՝ կախված այդ կարիքների տեսակից: Ուսանողները ներգրավված են քոլեջի կառավարման խորհրդում և տնօրինական խորհրդում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընտրված ուսանողները դեռ հստակ չեն պատկերացնում իրենց գործառույթների շրջանակը: Ուսանողներն իրենց տրված հնարավորությունների շրջանակներում ներկայացրել են որոշակի կարիքներ, ինչպես օրինակ՝ սննդի լաբորատորիայի հագեցվածության բարելավում, լաբորատորիաների թարմացում և վերազինում, դասախոսությունների կրճատում, համակարգիչների ձեռք բերում, բուժկետի առկայություն և այլն, որոնց մի մասն իրականացվել է:

2018 թվականին թարմացվել է «Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը»: Ըստ քոլեջի ինքնավերլուծության, ուսանողներին հատկացվում են խորհրդատվության ժամեր, մասնավորապես՝ շաբաթական մինչև 4 ժամ նախասիրական առարկաների ուսուցման, 1 ժամ դասղեկական ժամի համար, ինչպես նաև համապատասխան խորհրդատվության ժամեր միջանկյալ և ամփոփիչ պետական ատեստավորման նախաքննական շրջանում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողների մեծ մասը տեղյակ են իրենց հատկացվող խորհրդատվական

աջակցությունների մասին և օգտվում են ըստ անհրաժեշտության: Ինչպես նաև, դասավանդողների մի մասը երբեմն մոդուլը թերի յուրացրած ուսանողների հետ լրացուցիչ աշխատանք են տանում նաև աշխատանքային ժամերից դուրս:

Քոլեջում առկա է «ՊՈԱԿ-ի ուսումնառողներին՝ վարչակազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կանոնակարգ»՝ հաստատված 2018 թվականին: Տնօրենին և ստորաբաժանումների մի մասին դիմելու համար սահմանված են հստակ խորհրդատվության ժամեր՝ հիմնականում դասերի ավարտից հետո, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ոչ բոլոր ուսանողներն են բավարար տեղեկացված դրա մասին: Ուսանողներին ըստ անհրաժեշտության խորհրդատվություն տրվում է բանավոր կերպով, իսկ աջակցություն ստանալու համար քոլեջի տնօրենին են ներկայացնում գրավոր դիմում /կան դեպքեր, երբ ուսանողի դիմումի համաձայն տրամադրվել է նաև ֆինանսական օժանդակություն/:

Քոլեջում 2013 թվականին ստեղծվել է կարիերայի կենտրոն, սակայն ըստ ներկայացված ինքնավերլուծության՝ աշխատանքները կրել են տարերային բնույթ, մինչև 2017 թվականը՝ երբ կազմավորվել է համապատասխան ստորաբաժանումը և նշանակվել պատասխանատու: 2018 թվականին ստորաբաժանումը վերանվանվել է «Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման» ստորաբաժանում: Աշխատանքները կազմակերպվում են ըստ «Կարիերայի ստորաբաժանման գործունեության» կանոնակարգի: Ստորաբաժանման պատասխանատուի կողմից կազմակերպվում են ուսանողների կարիերային նպաստող միջոցառումներ, դասընթացներ, սեմինարներ, մասնակցում են ոչ ֆորմալ կրթական դասընթացների, աշխատաժողովների և այլն: Աշխատանք փնտրող շրջանավարտները և ուսանողները ուղղորդվում են Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ: Պատասխանատուն հավաքագրում է տեղեկատվություն թափուր հաստիքների, կամավորական աշխատանքների, տարբեր կրթական ծրագրերի մասին և տարածում ուսանողության շրջանում: Ուսանողների զբաղվածությունն ապահովվելու նպատակով պարբերապար կապ է հաստատում տարբեր գործատուների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ շեշտադրվում է ուսանողների շրջանում աշխատանքային էթիկայի նորմերի ուսուցումը, գրագետ ինքնակենսագրական կազմելը և հարցազրույցներին պատշաճ ներկայանալը: Որպես կարևոր ձեռքբերում կարելի է առանձնացնել ուսանողների մասնակցությունը «ՄԻԱՍԻՆ» հիմնադրամի կողմից իրականացված «Մրցունակ աշկերտ, հասանելի աշխատանք» ծրագրին, որի արդյունքում Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ուսանողների թիմը ստացել է «Լավագույն թիմ» մրցանակը, ՀՀ նախագահի հովանու ներքո անցկացվող մրցանակաբաշխությունում:

Քոլեջում ուսանողներն իրականացնում են դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ, անհատական աշխատանքներ և ընթացիկ առաջադրանքներ, որոնցում հետազոտական բաղադրիչը շատ թույլ է արտահայտված: Հարկ է նշել՝ դիպլոմային աշխատանքներ գրում են միայն «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական կուրսերի ուսանողները:

Քոլեջում գործող «Ուսանողական խորհուրդը» պատասխանատու է ուսանողների իրավունքների պաշտպանության համար, որն ամրագրված է ՈւԽ կանոնադրության 3.1 կետում: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ուսանողական խորհուրդի» աշխատանքային պլանը չի բխում վերը նշված պատասխանատվությունից, ինչի արդյունքում ուսանողները ոչ միշտ են դիմում ՈւԽ-ին: Քոլեջում 2018 թվականից գործում է նաև «Իրավակարգապահական հանձնաժողով»: Ըստ «Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալների և համապատասխան հիմքերի» վերլուծության՝ «Իրավակարգապահական հանձնաժողովին» բողոքներ ներկայացվել են միայն 2018 և 2021 թվականներին, և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հանձնաժողովը որպես իրենց իրավունքները պաշտպանող մարմին չեն դիտարկում:

Տրամադրվող խորհրդատվությունների, լրացուցիչ պարապմունքների և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման նպատակով Քոլեջի կրթության որակի պատասխանատուն՝ ուսանողների աջակցությամբ պարբերաբար անցակցնում է տարատեսակ հարցումներ ուսանողության շրջանում, սակայն դրանք դեռևս հստակ արձանագրված արդյունքներ չունեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ այդ հարցումներին ոչ բոլոր շահակիցներն են մասնակցել:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն ընդունելությունն իրականացնում է առցանց՝ ըստ համապատասխան կարգի և անհրաժեշտ տեղեկատվությունը ընդունելության գործընթացների վերաբերյալ արդյունավետ կերպով տարածվում է քոլեջի սոցիալական հարթակների միջոցով, ընչը կարող է խթանել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը: Ընդունելության իրականացման գործընթացքում փորձագիտական խումբը կարևորում է ընդունող հանձնաժողովի աշխատանքը՝ որպես պատասխանատու մարմին, պայմանավորված դրա ուղղակի

ազդեցությամբ վերընշված գործընթացների վրա: Սակայն միևնույն ժամանակ մտահոգիչ է այն փաստը, որ քոլեջի պաշտոնական կայքէջը պարբերաբար չի թարմացվում և մասնավորապես՝ ընդունելությանը վերաբերող տեղեկատվությունը սակավ է: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի ջանքերը ուսանողների հավաքագրման, ընդունելության անցկացման և դրա արդարությունն ապահովող գործընթացների մասով փաստաթղթային հենքն ապահովելու ուղղությամբ, և կարևորում վերջիններիս անհրաժեշտությունը, կիրառելիությունն ու համապատասխանությունը գործընթացներին:

Դրական փորձ է դիտարկվում «Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման» ստորաբաժանման պատասխանատուի կողմից իրականացված այցերը դպրոցներ, սակայն գործընթացը կանգ է առել վերջին 2 տարիներին, որի փախարեն կազմակերպվում են «բաց դռների» օրեր, ինչն աշակերտներին իրազեկելու տեսանկյունից ևս արդյունավետ մեխանիզմ կարելի է դիտարկել: Գովելի է այն, որ քոլեջը կարողանում է հայտարարություններ տարածել նաև մամուլում, ինչպես նաև տարածել երկլեզու տեղեկատվական թռուցիկներ:

Ողջունելի է վերջին տարիներին ուսանողների թվաքանակի աստիճանական աճը, ինչը նոր հնարավորություններ կարող է բացել քոլեջի համար, միևնույն ժամանակ առաջ բերելով որոշակի ռիսկեր՝ կապված առկա շենքային և նյութատեխնիկական ռեսուրսներին համապատասխան ուսումնառության գործընթացն արդյունավետ կազմակերպելու, նոր գործընկերներ գտնելու անհրաժեշտության և այլնի հետ:

Կարևոր է նշել, ուսանողների կարիքների վերհանման նպատակով քոլեջի կրթության որակի պատասխանատուի կողմից իրականացված հարցումներին ուսանողության թերի մասնակցությունը, ինչը կարող է ազդել ստացված արդյունքի արժանահավատության վրա և խանգարել հետագայում արդյունավետ վերլուծությունների իրականացմանը:

Ուսանողների կարիքների վերհանման գործում փորձագիտական խումբը կարևորում է նաև Ուսանողական խորհրդի դերը, քանի որ վերջինիս անդամակցում են բոլոր կուրսերի ավագները և նրանց օգնականները, ինչն արդյունավետ օգտագործելու դեպքում կարող է տալ հնարավորություն կարիքներն ավելի արագ և արդյունավետ բացահայտելու:

Ողջունելի է ուսանողների ներգրավվածությունը քոլեջի կառավարման և տնօրինական խորհուրդներում, սակայն ընտրված ուսանողների կողմից իրենց գործառույթների շրջանակը թերի պատկերացնելը պարունակում է ռիսկեր, խորհուրդներում վերջիններիս ներկայության արդյունավետության տեսանկյունից:

Կարևոր է նշել նաև, որ դրական է դիտվում ուսանողների կողմից բարձրացված որոշ խնդիրներին տրված լուծումների առկայությունը: Քոլեջի տնօրենին և որոշ ստորաբաժանումների դիմելու համար նախատեսված խորհրդատվության ժամերը թույլ կտան հնարավորինս կանոնակարգել գործընթացը, ինչը ուսանողներին օժանդակելու տեսանկյունից դրական է գնահատվում:

Դրական է գնահատվում քոլեջի Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ստորաբաժանման պատասխանատուի աշխատանքը, որի արդյունավետության մասին փաստում են քոլեջի շրջանավարտների զբաղվածության մակարդակը նկարագրող ցուցանիշները, սակայն գործընթացները չինստիտուցիոնալացնելու դեպքում ներկա արդյունքը կարող է նվազել ժամանակի ընթացքում:

Դրական է գնահատվում, որբ քոլեջում ուսանողներն իրականացնում են դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ, անհատական աշխատանքներ և ընթացիկ առաջադրանքներ, այդուհանդերձ դրանցում հետազոտական բաղադրիչը շատ թույլ է արտահայտված, և խնդրահարույց կարող է լինել ուսանողների շրջանում հետազոտական-վերլուծական հմտությունների զարգացումը:

Թեև ուսանողների իրավունքների պաշտպանության գործընթացն իրականացնելու պատասխանատվությունն Ուսանողական խորհրդի և Իրավակարգապահական հանձնաժողովի գործունեության շրջանակներում է, այնուամենայնիվ գործուն քայլեր չիրականացնելը կարող է հանգեցնել ուսանողների շրջանում նշված կառույցների դերի նվազեցմանը:

Տրամադրվող խորհրդատվությունների, լրացուցիչ պարապմունքների և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման նպատակով կրթության որակի պատասխանատուի կողմից իրականացվող հարցումները դեռևս արդյունավետ չեն վերլուծվում և ոչ թիրախային են, ըստ այդմ միտված չեն ակնկալվող արդյունքի ապահովմանը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերը վերոնշյալ գործընթացների կազմակերպման ուղղությամբ:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն ունի ուսանողների հավաքագրման գործուն մեխանիզմներ, ըստ սահմանված կարգի իրականացնում է ընդունելություն, ներդրված են ուսանողների կարիքների վերհանման և իրավունքների պաշտպանության որոշակի մեխանիզմներ, ուսանողները ստանում

են լրացուցիչ խորհրդատվություններ, կարիերայի ուղորդում, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը բավարարում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ»-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 4-ի պահանջներին գնահատում է ***բավարար:***

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ - հունական պետական քոլեջում դասախոսական համակազմը համալրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի համաձայն: Ըստ կարգի դասախոսի ընտրության համար մրցույթն իրականացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, որն անցկացնում է նախապես ձևավորված հանձնաժողովը, կազմվում է հարցաշար, որում ներառվում են դասախոսի դասավանդելիք մոդուլներին (առարկաներին) համապատասխան և մանկավարժական գործունեությանը վերաբերող հարցեր: Ինչպես նաև 2021 թվականին քոլեջում մշակվել է «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որի համաձայն քոլեջը մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար աշխատակից կարող է ընտրել մրցույթով, որակավորման քննությամբ, ընտրությամբ և առանց մրցույթի՝ ինքնուրույնաբար և ուղղակիորեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը բացառապես

ընտրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներին համապատասխան, իսկ ուսումնաօժանդակ կազմն՝ առանց մրցույթի: Ըստ քոլեջի ԻՎ-ի 2021 թվականին մրցութային կարգով աշխատանքի է ընդունվել 9 դասախոս, որոնցից 8-ը՝ հիմնական հաստիքային, իսկ 1-ը համատեղության կարգով: 2022 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում աշխատում է 60 դասախոս, որից 46-ը հիմնական աշխատող է, իսկ 14-ը՝ համատեղությամբ: Հարկ է նշել, որ 2022-2023 ուստարվանից ներդրված «Լոգիստիկա» մասնագիտության համար քոլեջը դեռևս չունի մասնագիտական դասախոսներ ներգրավելու հստակ պլան:

Քոլեջի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացված պահանջներն արտացոլված են ՄԿԾ-ներին համապատասխանող ՊԿՉ-ներում, «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր», «Դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները ըստ ՄԿԾ-ների» փաստաթղթերում և մրցութային կարգում: Քոլեջն առանձնացրել է նաև ֆորմալ և ոչ ֆորմալ՝ լրացուցիչ կրթական ծրագրերում դասավանդող մասնագետներին ներկայացվող պահանջները: Ֆորմալ կրթական ծրագրերում դասավանդողներին ներկայացված է 17 պահանջ (ունենալ բարձրագույն մասնագիտական կրթություն, դասավանդել իր մասնագիտությանը համապատասխան առարկա կամ մոդուլ, պարբերաբար վերապատրաստվել, դասավանդել նորագույն տեխնոլոգիաներով, ինտերակտիվ մեթոդներով և այլն), իսկ ոչ ֆորմալ՝ լրացուցիչ կրթական ծրագրերում դասավանդողներին ՝ 5 պահանջ (ունենալ բարձրագույն կրթություն կամ միայն գործնական պարապմունքների վարման համար՝ միջին մասնագիտական կրթություն, դասավանդել իր մասնագիտությանը հարիր առարկա կամ մոդուլ, պարբերաբար վերապատրաստվել և դասավանդել նորագույն տեխնոլոգիաներով, վարել կարողություններին միտված դաս, գնահատել ձեռքբերված կարողությունները ըստ կատարման չափանիշների, ալգորիթմային հաջորդականությամբ):

Ըստ ՄԿԾ-ների դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներում նշված է, որ այդ պահանջները սահմանվում են ըստ ՄԿԾ-ների, որոնց համապատասխան քոլեջի դասախոսը պետք է ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական և գործնական գիտելիքներ, դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ

դիտարկելու կարողություն, մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու կարողություն և այլն:

Փորձագիտական այցի և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ -հունական պետական քոլեջի դասախոսները դասավանդում են իրենց մասնագիտական որակավորմանը համապատասխան առարկաներ կամ մոդուլներ: Ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի համար մշակվել են պաշտոնի նկարագրեր, ըստ որոնց հստակեցված է յուրաքանչյուր աշխատակցի գործունեության շրջանակը:

Քոլեջը դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար սահմանել է գնահատման ուղիներ՝ մեխանիզմներ («Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր»), որոնցից են մշտադիտարկումը, վերահսկողությունը, ստուգումները, դասալսումները, հարցումները, հաշվետվությունները և դասախոսի անհատական մատյանները: Նույն փաստաթղթում սահմանել է նաև գնահատման գործիքները, որոնցից են անհատական մատյանները, դասամատյանները, մեթոդական մշակումները, վերապատրաստման հավաստագրերը, ուսումնամեթոդական ձեռնարկները, պատվոգրերը և այլն: Դասախոսի մանկավարժամեթոդական աշխատանքների գրառումների վերլուծության անհատական մատյանները նախատեսված են երկու կիսամյակի համար, որտեղ արտահայտվում է դասախոսի մասին անհատական և աշխատանքային գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, կատարած աշխատանքների ինքնավերլուծություն և գնահատում, գործունեության գնահատման չափանիշները, նշումներ կատարման և գնահատման վերաբերյալ (մինչև 10 միավոր), մասնագիտական առաջընթացն ապահովող գործընթացներ, մեխանիզմներ, մենթորություն և վերջում՝ աշխատանքների բարելավման պլան:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսի որոշ անհատական մատյաններում առկա են բացթողումներ՝ ամբողջությամբ լրացված չեն, կա գնահատում, սակայն 30 չափանիշներից կան նաև չկատարվածներ, որոնց դիմաց գնահատում չկա, դրանք այն չափանիշներն են, որոնց մեծ մասն արտահայտված է աշխատանքային պլաններում, օրինակ՝ ուսուցողական և բաց դասերի կատարում, տեսական և գործնական պարապմունքների տարբեր տեսակների մեթոդական մշակումներ, հասարակական ակտիվություն և այլն: Առկա են գնահատականներ մինչև 10 միավոր, սակայն հասկանալի չէ, թե ինչ մեթոդաբանությամբ է օրինակ՝ գնահատման միջոցների ճիշտ ընտրության համար դասախոսը ստանում 4 միավոր, միջին թիվ դուրս չի բերվում, առկա է կատարած

աշխատանքների ինքնավերլուծություն ու գնահատում, իսկ ուսումնասիրած ոչ բոլոր մատյաններում են առկա բարելավման պլաններ:

Դասախոսների աշխատանքի գնահատման մեխանիզմներից են դասալսումները, որոնք իրականացվում են ուսումնական մասի, ամբիոնի վարիչների կողմից, ինչպես նաև իրականացվում են փոխադարձ դասալսումներ: Վերջիններս վերլուծվում են, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ վերլուծությունները հիմնականում ուղղված չեն բովանդակային և թիրախային խնդիրների վերհանմանը:

Գնահատման մեխանիզմներից են նաև հարցումները, որոնք իրականացվում են ուսանողների շրջանում: Հարցաթերթիկները բաղկացած են 13 հարցից, որոնք վերաբերում են դասախոսի մեթոդական պատրաստվածությանը, դասավանդման, մանկավարժական հմտություններին: Բոլոր մասնագիտությունների համար հարցաթերթերը պարունակում են նույն հարցերը և, ըստ մասնագիտական առանձնահատկությունների, խնդիրները չեն առանձնանում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ կատարվել է հարցումների վերլուծություն, յուրաքանչյուր հարցի համար ձևավորվել է առավելագույն բարձր միավոր և ընդհանուր միավոր, որոնք ըստ մասնագիտությունների տարբեր են: Հարցումների վերլուծությունից յուրաքանչյուր դասախոս հավաքել է որոշակի միավոր, որը վերածվել է վարկանիշային միավորի:Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսները չեն իրազեկվել իրենց վարկանիշային միավորի մասին և այն որևէ ազդեցություն չունի հավելավճարի չափը որոշելիս:

Ուսանողների կողմից վերհանվել են որոշակի խնդիրներ, որոնք վերաբերում են օրինակ՝ դասախոսության շատ լինելուն, առանց մատյան դասին ներկայանալուն, դասախոսի անձնային հատկանիշներին և այլն, սակայն պարզ չէ, թե դրանց լուծման վերաբերյալ քոլեջի ղեկավարությունն ինչ քայլեր է ձեռնարկել:

Դասախոսական կազմի որոշ ներկայացուցիչներ մասնագիտական ձեռնարկների հեղինակներ են: Վերջիններս խրախուսվել են շնորհակալագրերով:

Դասախոսական անձնակազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներից են պարբերաբար վերապատրաստվելը և մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտումը: 2019-2022 թթ. ընթացքում ընդհանուր առմամբ վերապատրաստվել է քոլեջի 16 դասախոս: Վերապատրաստման թեմաներն են՝ «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում հարավային Կովկասում», «Հյուրանոցի հիմնական, լրացուցիչ ծառայություններ, մարքեթինգ և MICE», «YOUth Volunteers-ի

աշխարհագրություն», «Խոհարարություն», «Առաջին բուժօգնություն», «Հունարենի դասավանդումը որպես 2-րդ, 3-րդ օտար լեզու», «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ», «Կարիերայի ուղղորդման աշխատանքները ՄԿՈՒ հաստատություններում», «Աշկերտությունը որպես լավագույն միջոց դպրոցից սահուն աշխատավայր անցնելու համար» և «Հանրային կապերի, մարքեթինգի և սոցիալական ցանցերի կառավարման դերն ու նշանակությունը միջին մասնագիտական հաստատությունների գործունեության ընթացքում»: Դասախոսական կազմը մասնակցում է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Վերջիններս պլանային են, մեթոդական և իրականացվում են ամեն տարի: Փորձագիտական այցի ընթացքում և դասախոսական անձնակազմի հետ հանդիպումից պարզ դարձավ, որ նրանց մեծ մասը մասնագիտական վերապատրաստումների կարիք ունեն: Վերջին երեք տարիների ֆինանսական գործունեության նախահաշվով աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսված է եղել գումար, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմից 1-2 աշխատակից է մասնակցել վերապատրաստման, դասախոսական անձնակազմը վճարովի մասնագիտական վերապատրաստումների չի մասնակցել:

Ըստ «Դասավանդողների կատարելագործման պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղության» փաստաթղթի, դասախոսներից պահանջվում է մեթոդական մշակումների կատարում տարին մեկ անգամ, ուսումնառությանը փոխկապակցված հետազոտական աշխատանքների կատարում, բաց դասերի անցկացում, դասալսումների կատարում: Սակայն փորձագիտական այցի ընթացքում և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ոչ բոլոր պլանավորումներին է քոլեջը հետևում, մասնավորապես՝ դասախոսների մեծ մասը տարին մեկ անգամ մեթոդական մշակում չի իրականացնում, բաց դասեր պարբերաբար չեն անցկացվում: Նպատակադրումներից է նաև դասախոսների պարբերաբար ատեստավորման իրականացումը, ինչը քոլեջում չի իրականացվում:

Նոր ընդունված դասախոսների համար քոլեջում գործում է «Սկսնակների դպրոց», որը կանոնակարգվում է 2018 թվականին մշակված «Սկսնակ դասավանդողների մենթորային քաղաքականություն և ընթացակարգեր» և «Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթղթերով: Ըստ ընթացակարգի մենթորությունը սկսվում է կադրերի բաժնից՝ աշխատանքի ընդունումով, քոլեջի հետ կապված կարևոր փաստաթղթերին ծանոթացնելով (ներքին կարգապահական կանոններ, կոլեկտիվ պայմանագրեր՝ առկայության

դեպքում, աշխատանքային անվտանգության կանոններ, պաշտոնի անձնագիր և այլն), այնուհետև մենթորությունը շարունակվում է ուսումնական մասում, համապատասխան ամբիոնում և մեթոդիստի անմիջական մասնակցությամբ: Ընթացքում իրականացվում են դասալսումներ և բացահայտվում է սկսնակ դասավանդողի մասնագիտական մանկավարժական կարիքները, որին համապատասխան ամբիոնի վարիչը կամ որևէ փորձառու դասախոսը ստանձնում է մենթորի գործառույթները, որը շարունակվում է 3 տարի: Երրորդ տարվա ավարտին նախատեսվում է դասախոսի ատեստավորում, ձևավորված ատեստացիոն հանձնաժողովը գնահատում է մենթորի և դասախոսի աշխատանքը, սակայն քոլեջում վերջին 4 տարվա ընթացքում գնահատման որևէ գործընթաց չի իրականացվել: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ բոլոր սկսնակները ընդգրկվել են սկսնակների դպրոցում և նրանց ցուցաբերվել է մենթորական և մանկավարժական աջակցություն ամբիոնի վարիչների և մեթոդիստի կողմից: Ընթացակարգում նշվում է նաև արհմիության միջնորդությամբ իրականացվող խրախուսման մասին, ինչի վերաբերյալ նույնպես չկան արձանագրված փաստեր:

Քոլեջը կանոնակարգել է կադրային կայունությունն ապահովվող գործոնները և գործառույթները: Ունեն կայուն դասախոսական համակազմ, վերջին տարիներին համակազմն համալրվել է երիտասարդ կադրերով և քոլեջը դա համարում է իր ուժեղ կողմերից մեկը: Յուրաքանչյուր տարվա ընդունելությունից կախված՝ առաջանում է դասավանդողների կարիք, որը քոլեջը լուծում է օրենքով սահմանված կարգով: Դասախոսները հիմնականում տեսական դաշտից են, քոլեջում կա մեկ գործատու դասախոս «Զբոսաշրջություն» մասնագիտությունից, ով հանդիսանում է նաև դուալ կրթական ծրագրի գործընկեր: Տեխնոլոգիական մասնագիտություններում քոլեջը չունի արտադրական ոլորտից պրակտիկ դասավանդողներ: Բացի այդ 2022-2023 ուստարվանից քոլեջում ներդրվել է նոր մասնագիտություն «Լոգիստիկա», սակայն դեռևս տվյալ մասնագիտության գծով քոլեջը չունի համապատասխան մասնագետներ:

Ըստ «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության և ընթացակարգ»-ի դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակավորումն անհրաժեշտ մակարդակի վրա պահելու և նրանց մասնագիտական առաջընթացի համար կարևորում է պարբերաբար կազմակերպվող վերապատրաստումները, հաճախակի կատարվող դասալսումները և այլն, սակայն նշված պայմանները ոչ թե կոնկրետ իրականացվող քայլեր են, այլև ապագայի նպատակադրումներ: Փորձագիտական այցի ընթացքում շահակիցների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ քոլեջի դասախոսներից 2-ը ունեցել են մասնագիտական առաջընթաց՝ զբաղեցնելով վարչական պաշտոններ և համալրել են ուսումնաօժանդակ կազմը: Բացի

այդ փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ քոլեջում առավել ընդունված է ոչ նյութական խրախուսման ձևը, սակայն նյութական խրախուսում աշխատակիցները նույնպես ստացել են դեկտեմբերին, նաև այլ լրացուցիչ աշխատանք կատարելու համար համապատասխան հրամանով:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն ունի 5 վարչական, 22 ուսումնաօժանդակ և 10 վարչատնտեսական (տեխնիկական սպասարկող) աշխատակից (2022 թվականի սեպտեմբերի 14-ի դրությամբ): Հաստիքների համալրումը կախված է ուսանողների թվաքանակից, ըստ որի՝ բոլոր հաստիքները համալրված են 2022 թվականի հաստիքացուցակով:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ դասախոսական անձնակազմին ընտրում և աշխատանքի է ընդունում մրցութային կարգով, ինչը հնարավորություն է տալիս ընդունել առավել մրցունակ և որակյալ կադրեր: Դրական է նաև այն, որ դասախոսական կազմի մեծ մասը հիմնական աշխատողներ են և իրենց հիմնական զբաղվածությունը քոլեջում է: Միևնույն ժամանակ, ուսանողների թվի ավելացմանը զուգահեռ ավելացել է նաև դասավանդողների թիվը: Քանի որ քոլեջը չունի նոր ներդրված «Լոգիստիկա» մասնագիտության համար մասնագիտական դասախոսներ ներգրավելու հստակ պլաններ, ուստի կարող է վտանգվել նոր ՄԿԾ-ի արդյունավետությունը:

Գովելի է, որ բացի մրցութային կարգից, ՊԿՉ-ներում եղած պահանջներից, քոլեջն ըստ ՄԿԾ-ների սահմանել է դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, որով կարողանում է ապահովել, որ ուսումնական հաստատությունում դասավանդեն համապատասխան հմտություններ ունեցող մասնագետներ: Դրական է նաև, որ դասախոսները դասավանդում են իրենց որակավորմանը համապատասխանող մասնագիտական մոդուլներ/առարկաներ: Փորձագիտական խումբը դրական է համարում նաև այն, որ ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի համար մշակվել են պաշտոնի նկարագրեր, որը հնարավորություն է տալիս հստակ սահմանազատելու հաստիքների գործառույթները և խուսափելու կրկնություններից:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը դասախոսական անձնակազմի գնահատման համար ձեռնամուխ է եղել ստեղծել դասախոսի անհատական մատյաններ, սակայն վերջիններս ամբողջական չեն,

ունեն լավարկման կարիք, որից հետո կարող են դառնալ դասախոսների գնահատման կարևոր մեխանիզմ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը դասախոսական անձնակազմի գնահատման համար կիրառում է տարբեր մեխանիզմներ, որոնցից են անանուն հարցումները, սակայն վերջիններս դեռևս անկատար են, քանի որ հարցմանը մասնակցում են ոչ մեծ թվով ուսանողներ, արդյունքների հրապարակման հետ նույնպես կա խնդիր, վերհանված խնդիրների լուծման հետագիծն անորոշ է, սակայն ճիշտ ներդրման արդյունքում ուսանողներն անմիջական մասնակիցը կդառնան խնդիրների վերհանման գործընթացներին: Մտահոգիչ է, որ դասախոսական անձնակազմի գնահատման համար իրականացվող դասալսումները գնահատման տարր չեն պարունակում, ըստ այդմ՝ դրանք նման ձևով իրականացնելիս որպես գնահատման գործիքակազմ այդքան էլ արդյունավետ չեն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորում է իր դասախոսների մասնագիտական կարողությունների կատարելագործումը, դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի և այլ կառույցների կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, սակայն մինչ վերապատրաստումը չի գնահատվում դասախոսի կարիքը: Եղել են որոշ մասնագիտական մոդուլների վերապատրաստումներ, սակայն դրանց մասնակցել են քիչ թվով դասախոսներ, հատուկ մասնագիտական վերապատրաստումներ չեն եղել, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների բարձրացման համար:

Փորձագիտական խումբը կարևորում է , որ քոլեջը կանոնակարգված օժանդակություն է ցուցաբերում նոր ընդունված դասախոսներին «Սկսնակների դպրոց»-ի միջոցով, ինչը մենթորության դրական օրինակ է:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ - հունական պետական քոլեջի 60 դասախոսներից միայն մեկն է գործատու-դասավանդող, սակայն դրական է, որ վերջին տարիներին ավելացել են երիտասարդ դասավանդողները, ովքեր կարող են նորամուծությունների հիմքը դնել քոլեջում: Մտահոգիչ է, որ 4 տեխնոլոգիական մասնագիտություն ունենալու պարագայում, քոլեջը չունի արտադրությունից ներգրավված գործատու-դասավանդողներ և վերջիններիս ներգրավման, շահադրդման քաղաքականություն, որի արդյունքում զգալիորեն կարող են բարելավվել գործնական դասընթացները, ինչպես նաև փորձի փոխանակման արդյունքում հիմնական դասախոսների մասնագիտական որակները կլավարկվեն:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում առկա են որոշակի ֆինանսական շահադրդման մեխանիզմներ, պատվոգրերի, շնորհակալագրերի հանձնում, բանավոր խրախուսում, սակայն այս գործընթացի արդյունավետությունն ավելի կբարձրանար, եթե քոլեջն ունենար դասախոսի աշխատանքի գնահատման հստակ չափանիշներ և խրախուսման համակարգը հիմնված լիներ տվյալ չափանիշների վրա:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն, կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, երիտասարդ կադրերի օժանդակության քաղաքականություն, մասնագիտական ներուժ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է ***բավարար:***

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը մշակել է հետազոտական աշխատանքների ռազմավարական ծրագիր 2017-2022թթ. համար, ուր ներկայացված է քոլեջի ռազմավարական նպատակները հետազոտության ոլորտում: Այն չի բխում քոլեջի 2017-2022թթ. Ռազմավարական երկարաժամկետ ծրագրի ընդհանուր դրույթներից, որում առաջնահերթություն է համարվել հայկական և արտասահմանյան գիտակրթական կազմակերպությունների հետ կապերի զարգացումը, ուսումնամեթոդական ձեռնարկների, թեստային ժողովածուների տպագրումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը և այլն: Բացի նշյալը, հետազոտական

աշխատանքների ռազմավարական ծրագրով հիմնականում շեշտադրումը դրված է հետազոտական աշխատանքների կատարման չափանիշների, գնահատման միջոցների, ղեկավարների պատասխանատվության, խրախուսման մեխանիզմների մշակման բարձրացման վրա, մինչդեռ 2017-2022թթ. ՌԾ-ով հստակ նշված են գիտական կազմակերպությունների հետ համագործակցության, հետազոտական աշխատանքների հրապարակայնացման և նորարարական աշխատանքների իրականացման ուղղությունները: Քոլեջը մշակել է հետազոտությունների իրականացման քաղաքականություն և ուղղություններ, ուր առանձնացված են դասախոսներին, ուսումնառողներին, վարչական աշխատողներին ներկայացված հստակ հետազոտական պահանջներ, ինչպես օրինակ՝ կիսամյակի ընթացքում 1 մեթոդական մշակում, անհատական և խմբային հետազոտական աշխատանքներ, վիճակագրական հետազոտական աշխատանքներ և հաշվետվություններ: Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ հիմնականում նույն դասախոսների կողմից են մշակում մեթոդական աշխատանքներ՝ տարեկան մեկ անգամ: Քոլեջում մշակվել է նաև «Դասավանդողների կատարելագործման պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղության» փաստաթուղթը, որտեղ ևս պահանջվում է մեթոդական մշակումների կատարում կիսամյակը մեկ անգամ:

Ուսանողների շրջանում կատարված անհատական, թիմային աշխատանքներ ընդհանուր առմամբ տեղեկատվություններ պարունակող փաթեթներ են, որոնք ստեղծագործ միտք ձևավորող չեն, առկա չեն ուսանողների սեփական դիրքորոշումները եզրահանգումների տեսքով: Քոլեջի գործունեության 5 տարվա վերլուծության մեջ չլուծված խնդիրների շարքում ներկայացված է, որ ուսանողների ներկայացրած հետազոտական աշխատանքների մի մասը դեռևս փաստագրական են, ռեֆերատիվ, գիտահետազոտական աշխատանքները եզակի են նաև դասախոսներ մոտ:

Մինչև 2012 թ. քոլեջի դասախոսների կողմից մշակվել են թվով 4 ուսումնական ձեռնարկ և 2 գրքույկ, ընդ որում հիմնականում «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների համար: 2017 թ.-ին մշակած ուսումնական ձեռնարկը վերաբերում է հանրակրթական բլոկին: Առկա են ՄԿՈՒԶԱԿ-ի ֆինանսավորմամբ 2021թ. տպագրված «Զբոսաշրջություն» ուսումնամեթոդական ձեռնարկ՝ «Զբոսաշրջություն» մասնագիտության 3 դասախոսների համահեղինակությամբ: Հանրակրթական բլոկի որոշ դասախոսներ կատարել են մշակումներ, ուր առկա է հետազոտական բաղադրիչ, մասնավորապես՝ կենսաբանության և քիմիայի, հայոց պատմության, բնագիտական առարկաների գծով (մաթեմատիկա, ֆիզիկա), ինչի համար խրախուսվել են շնորհակալագրերով: Այցից պարզ դարձավ, որ 2017-2022թթ. ՌԾ-ի ըստ գործունեության ուղղությունների նպատակադրումների քոլեջի

դասախոսները չունեն տպագրված մասնագիտական հետազոտական աշխատանքներ։

Հարկ է նշել, որ ինչպես ՌԾ-ով, այնպես էլ այլ փաստաթղթերով սահմանված հետազոտական նպատակադրումների, հավակնությունների իրականացման համար քոլեջն առանձին ֆինանսական ռեսուրսներ չի տրամադրում, տեխնոլոգիական մասնագիտությունների գծով հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ ևս առկա չեն, բացի դա՝ գործատու-գործընկերների հետ քոլեջը չունի համագործակցություններ՝ վերջիններիս ռեսուրսները հետազոտական նպատակներով օգտագործելու համար։ Ինչ վերաբերում է ուսանողներին, ապա մասնագիտական մոդուլների շրջանակում առկա չեն դասախոսների հետ համատեղ իրականացված հետազոտական բաղադրիչ պարունակող աշխատանքներ։

Քոլեջն ունի հետազոտությունների կազմակերպման և համակարգման կառուցվածքային սխեմա, որով տեսանելի է հետազոտական աշխատանքների իրականացման քայլերի հաջորդականությունը։ Բացի այդ, ըստ ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավման քաղաքականության (ներառված են հետազոտական աշխատանքների կատարման չափանիշները, գնահատման միջոցները), հիմնականում հետազոտական աշխատանքները քոլեջում իրականացվում են բանավեճերի, կլոր սեղանների, շնորհանդեսների և էքսպոների միջոցով։ Վերջիններս ստեղծագործ և վերլուծական միտք զարգացնող միջոցառումներ են, սակայն դրանք կայուն պարբերականություն չեն ապահովում։ Ներկայացված փաստաթղթերի և քոլեջում իրականացվող գործընթացների համադրության արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջում իրականացված գործընթացները, որոնք պետք է ներառեն հետազոտական բաղադրիչը, չեն բխում քոլեջի սահմանված հետազոտական հավակնություններից։ Ռեֆերատներ գրում են հիմնականում բարձր գնահատականների հավակնող ուսանողները։ Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ռեֆերատներում բացակայում են թեմատիկ վերլուծությունները, դրանք հիմնականում թարգմանություններ են և չեն պարունակում ստեղծագործական մոտեցումներ, եզրահանգումներ, ամփոփումներ։ «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների կողմից ներկայացված նորարարական աշխատանքներն իրենցից ներկայացնում են կերակրատեսակների բաղադրագրերի մշակում, որտեղ նշված չեն նպատակը, նորարարությունը և եզրակացությունները։ Այդ մասնագիտության որոշ ուսանողներ իրականացնում են մեթոդական մշակումներ՝ կազմելով տարբեր կերակրատեսակների համար տեխնոլոգիական քարտեր։ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների կատարած դիպլոմային աշխատանքներից մեկ-երկուսն ունեն հետազոտական ուղղվածություն, որոնցում բացակայում են

համեմատական վերլուծությունները, ամփոփումները, եզրակացությունները, բացակայում են գրականությունից հղումները։

Քոլեջում առկա է հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցմանն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը, մեթոդները և մեխանիզմները, երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը։ Փորձագիտական խմբի այցից պարզ դարձավ, որ նշյալ փաստաթղթերով սահմանված դրույթները ևս ընդհանուր առմամբ իրականացված չեն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում ներգրավվածություն չունեն հետազոտական աշխատանքների իրականացմանը, տեսանելի չեն հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունը։ Կրթական ծրագրերում, դասընթացների պլաններում քոլեջի դասախոսների կողմից կատարված հետազոտությունները (ձեռնարկ, նյութեր, հոդվածներ և այլն) գրականության ցանկի, առաջադրանքների կամ այլ ձևերով ներառված չեն։ Քոլեջում առկա են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից դասախոսների և ուսանողների բավարարվածության վերլուծություններ։ Ըստ քոլեջի ներկայացրած տվյալների՝ դասախոսների և ուսանողների բավարարվածությունը հետազոտական աշխատանքների կատարումից կազմում է 100%։ Ուսանողների համար հետազոտական աշխատանքների գնահատման հարցաշարն ըստ էության չի կարող ամբողջական գնահատական տալ հետազոտական աշխատանքների արդյունավետության վերաբերյալ, տեսանելի չեն կարող լինել խնդիրները։ Հարցերը հիմնականում վերաբերում են հետազոտական աշխատանքների կատարման և գնահատման փաստերին, ուսանողներն ընդամենը փաստարկել են իրենց մասնակցությունը հետազոտական աշխատանքներին, արձանագրել են գնահատականից իրենց բավարարվածությունը, բացի այդ էլ՝ հարցման վերլուծության մեջ նշվում է, որ մասնակցել են թվով 20 կուրս, սակայն պարզ չէ յուրաքանչյուր կուրսից մասնակցած ուսանողների քանակը։Ինչ վերաբերում է դասախոսների համար հետազոտական աշխատանքների գնահատման հարցաշարին, ապա այն նույնպես բովանդակային առումով արդյունավետության վերաբերյալ հստակ գնահատական չի կարող տալ, խնդիրները չեն կարող երևալ։ Նշյալ հարցաշարի համար առկա է աղյուսակային վերլուծություն (վերջնարդյունքը թվերով և տոկոսներով 2021-2022 ուստարի), որն այդքան էլ ընկալելի չէ։ Առկա է հարցաշարի վերլուծության բարելավման պլանը, ուր ներկայացված պլանային գործողություններն ընդհանուր առմամբ չեն ամփոփում հարցաշարի բովանդակությունն ու արդյունքները։

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ 2017-2022թթ. ՌԾ-ով առանձնացված են քոլեջի ստեղծագործական, նորարարական, գիտահետազոտական ուղղության նպատակադրումները, զուգահեռաբար առկա է 2017-2022թթ. հետազոտական աշխատանքների ռազմավարական ծրագիր, սակայն մտահոգիչ է, որ հետազոտական բաղադրիչի պլանավորումների կոնտեքստում այդ 2 ռազմավարական ծրագրերը համահունչ չեն՝ վտանգելով դրանց փոխկապակցված իրագործմանը: Թեև քոլեջի մշակած հետազոտությունների իրականացման քաղաքականությամբ դասախոսներին, ուսանողներին, վարչական աշխատողներին ներկայացված են հստակ հետազոտական պահանջներ, ադուհանդերձ ընդհանուր կետերով այդ պահանջները չեն ապահովվում: Հատկանշական է, որ քոլեջի գործունեության 5 տարվա վերլուծությամբ հետազոտական բաղադրիչին վերաբերող չլուծված խնդիրների շարքում առանձնանում են ուսանողների հետազոտական աշխատանքների փաստագրական, ռեֆերատիվ բնույթը, դասախոսների մոտ գիտահետազոտական աշխատանքների եզակի դեպքերը: Արդյունքում վտանգվում է հետազոտության ոլորտում քոլեջի սահմանած նպատակադրումների իրագործելիությունը:

Թեև հանրակրթական բլոկի որոշ դասախոսներ կատարել են մշակումներ, ուր առկա է հետազոտական բաղադրիչ, այնուամենայնիվ անհանգստացնող է, որ տպագրված ուսումնական ձեռնարկների, գիտահետազոտական աշխատանքների որոշակի քանակ ապահովվել է մինչև 2012թ.-ը, վերջին տարիների կտրվածքով առկա է ընդամենը 2 հրապարակում՝ 2017թ. և 2021թ.-ին: Նշյալն ուղղակիորեն կասեցնում է քոլեջի հետագա զարգացումը հետազոտության ոլորտում:

Խնդրահրույց է, որ քոլեջում գործող տեխնոլոգիական մասնագիտությունների գծով հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները բացակայում են, գործատու-գործընկերների հետ առկա չեն նրանց ռեսուրսները համատեղ հետազոտական նպատակներով օգտագործելու համագործակցություններ, ի հավելումն նշյալի՝ քոլեջը հետազոտական նպատակների իրականացման համար առանձին ֆինանսական ռեսուրսներ չի տրամադրում, ուստի ամբողջությամբ վտանգված է հետազոտական գործունեության արդյունավետությունը:

Փորձագիտական խումբն անհանգստացնող է համարում, որ ուսանողները հիմնականում ներգրավված չեն հետազոտական աշխատանքների իրականացմանը, տեսանելի չեն հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունն առ այն, որ մասնագիտական կրթական ծրագրերում, դասընթացների պլաններում դասախոսների կողմից կատարված հետազոտությունները գրականության ցանկի, առաջադրանքների կամ այլ

ձևերով ներառված չեն, ռեֆերատներ գրում են ոչ բոլոր ուսանողները, դրանք հիմնականում թարգմանություններ են, ուր բացակայում են թեմատիկ վերլուծությունները, առկա չեն ստեղծագործական մոտեցումներ, եզրահանգումներ, ամփոփումներ: Մտահոգիչ է, որ դիպլոմային աշխատանքներ գրում են միայն «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողները, այն էլ՝ դրանցից մեկ-երկուսն ունեն հետազոտական ուղղվածություն, բացակայում են համեմատական վերլուծությունները, ամփոփումները, եզրակացությունները, գրականությանից հղումները: Վերոնշյալի համատեքստում փորձագիտական խումբը դրականորեն առանձնացնում է «Հանրային սննդի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողների կողմից իրականացված մեթոդական մշակումները, որի շրջանակում ուսանողները կազմել են տարբեր կերակրատեսակների համար տեխնոլոգիական քարտեր, ուր առկա է հետազոտական բաղադրիչը:

Թեկուզև առկա են ուսանողների և դասախոսների շրջանում հետազոտական աշխատանքներից բավարարվածության հարցումներ, որոշ վերլուծություններ, բավականին բարձր բավարարվածության ցուցանիշներ, այդուհանդերձ փորձագիտական խումբն անհանգստացնող է համարում, որ հարցումները բովանդակային առումով խնդիրներ հանող չեն, արդյունավետության վերաբերյալ հստակ գնահատականներ չկան, վերլուծությունների արդյունքում նշված բարելավումները ընդհանուր առմամբ չեն ամփոփում հարցաշարի արդյունքները: Արդյունքում վտանգվում է հետազոտության հետ կապված հարցումների արժանահավատությունը և բարելավումների իրականացումը:

Ընդհանրացնելով՝ ներկայացված փաստաթղթերի և քոլեջում իրականացվող գործընթացների համադրության արդյունքում փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում իրականացված գործընթացները, որոնք պետք է ներառեն հետազոտական բաղադրիչ, չեն բխում քոլեջի հետազոտական հավակնություններից, մշտադիտարկված և վերլուծված չեն հետազոտությունների արդյունքները: Վտանգված է հետազոտահենք և վերլուծական կարողություններ զարգացնելու ռազմավարությունը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը չի ապահովում հետազոտության ոլորտում իր սահմանած ռազմավարական նպատակադրումների իրականացումը, տեխնոլոգիական մասնագիտությունների գծով հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները

բացակայում են, գործատու-գործընկերների հետ առկա չեն նրանց ռեսուրսները հետազոտական նպատակներով օգտագործելու համագործակցություններ, սակավ են վերլուծական կարողություն ձևավորող հանձնարարականները, մշտադիտարկված և վերլուծված չեն հետազոտությունների արդյունքները, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատվում է ***անբավարար:***

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն ունի 3296,24 քմ. մակերեսով տարածք: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ շենքն ունի կապիտալ վերանորգման կարիք: Քոլեջի լսարանային ֆոնդը չբավարարելու պատճառով դասերը կազմակերպվում են 2 հերթով: Առկա են քիմիայի, կենսաբանության և մանրէաբանության, ֆիզիկայի լաբորատորիաներ, 8 կաբինետ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ լսարանները կահավորման կարիք ունեն՝ սեղան-աթոռները երբեմն ավելի քիչ են, քան խմբում ուսանողների քանակը, կաբինետ-լաբորատորիաներում առկա չեն անհրաժեշտ սարքավորումներ և պարագաներ: Լսարանների, կաբինետների սակավությունը որոշակի դժվարություններ է առաջացնում և՛ դասախոսների, և՛ ուսանողների համար լրացուցիչ, հետազոտական, խորհրդատվական բնույթի աշխատանքներ կատարելու տեսանկյունից:

Քոլեջում գործում է սննդի, հրուշակեղենի և փոձարարաարտադրական տեխնոլոգիաների և խոհանոցային լաբորատորիա, ուր միևնույն ժամանակ գործնական պարապմունքներն են իրականացնում «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա» և «Կաթի, կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների ուսանողները: 2021-2022 ուստարվա տվյալներով այդ 3 տեխնոլոգիական մասնագիտությունների 2-4-րդ կուրսերում սովորում են 263 ուսանող: Փորձագիտական այցից դուրս է բերվել, որ նրանց՝ վերջնարդյունքներին համարժեք գործնական հմտություններ ապահովող գործնական, լաբորատոր պարապմունքները թերևս անհնար է լիարժեքորեն կազմակերպել այդ նույն լաբորատորիայում առկա շատ սակավ գույքով և ռեսուրսներով, բացի այդ էլ, այդ 3 մասնագիտությունների գծով գործնական պարապմունքներ իրականացնելու համար լաբորատորիան ծանրաբեռնված է: Ինչ վերաբերում է Խմորման արտադրության տեխնոլոգիայի, սարքավորումների լաբորատորիային, ապա առկա սարքավորումների մեծ մասը բարոյապես մաշված են, չեն շահագործվում և ենթակա են դուրս գրման: Այցի ընթացքում պարզ դարձավ՝ գործնական պարապմունքների ժամերին ընդամենը այդ սարքավորումների տեսադիտում է իրականացվում: Տեխնոլոգիական մասնագիտությունների ուսանողներն իրենց գործնական հմտությունները հիմնականում ձեռք են բերում պրակտիկաների ընթացքում, բարձր կուրսերի ուսանողներն էլ հիմնականում աշխատում են և ձեռք են բերում իրենց աշխատանքի վայրերում: Դա են փաստում ուսանողները, շրջանավարտները, դասախոսները և գործատուները: Քոլեջում 2021-2022 թթ. ուստարվա տվյալներով սովորում են 960 ուսանող, 2022-2023 ուստարում ուսանողների թիվն ավելացել է՝ կազմելով 1074, իսկ համակարգչային լսարանն ընդամենը մեկն է՝ 13 համակարգիչներով: Քոլեջի գրադարանը բարվոք վիճակում է, համալրված է 22000 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, ոչ բոլոր մասնագիտությունների գծով է առկա արդի և թարմ գրականություն: Գործում է համտեսի սրահը, այն ևս բարվոք վիճակում է: Հարկ է նշել, որ լսարանային ֆոնդը չբավականացնելու պատճառով համտեսի սրահում և գրադարանում ևս կազմակերպվում են դասընթացներ: Սպորտդահլիճը կապիտալ վերանորագման կարիք ունի, ապահովված չէ ջեռուցման համակարգով, բուֆետը վերանորոգման փուլում է: Փորձագիտական խումբը հարկ է համարում նշել, որ ՌԾ-ով նախատեսված է եղել ստեղծել կաթի և կաթնամթերքի լաբորտորիա, գինեդարան, վերազինել լաբորատորիաները, ապահովել կաբինետ-լաբորատորիաները անհարժեշտ գույքով, պարագաներով, սարքավորումներով, նյութերով՝ ըստ սահմանված հագեցվածության նորմերի, վերանորոգել մարզադահլիճը և հարստացնել մարզական գույքով և այլն: 2017-2022թթ. ՌԾ-ն արդեն ավարտման փուլում է, և նշյալ կարևոր նպատակները դեռևս չեն իրագործվել:

Քոլեջն իր գործունեությունն իրականացնելու համար ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, մուտքեր են ձևավորվում նաև արտաբյուջեի հաշվին, որի զգալի մասն ուղղվում է աշխատակիցների աշխատավարձի հավելումներին՝ հավելավճարների տեսքով: Քոլեջը կարող է նաև իրականացնել կարճաժամկետ դասընթացներ՝ ակնկալելով ապահովել լրացուցիչ ֆինանսական մուտքեր: Խոսքը վերաբերում է բարմեններ, խոհարարներ, հրուշակագործներ, մատուցողներ, կարվինգ, մանկական սնունդ դասընթացներին: Ներկայումս կարճաժամկետ դասընթացներից քոլեջը ֆինանսական մուտքեր չի ապահովում: Վերջին տարիներին քոլեջի արտաբյուջեն վճարովի սովորող ուսանողների քանակի ավելացմանը զուգահեռ՝ մեծացել է: Փորձագիտական ուսումնասիրությունները փաստում են, որ 2021թ. տվյալներով քոլեջում առկա ֆինանսական ռեսուրսները գերազանցապես՝ 84,2%-ով ուղղվում են աշխատավարձի և հավելավճարների ֆոնդին, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգմանը հատկացվում է ծախսերի շուրջ 2,3%-ը, վարչական սարքավորումներ և տրանսպորտային ծախսեր ծախսային հոդվածները միասին կազմում են տարեկան ծախսերի 2,5%-ը, այլ մեքենաներ և սարքավորումները՝ 0,5%-ը, կոմունալ վճարները՝ 2,3% (առկա են նաև ծախսերի այլ խմբեր, որոնք միասին կազմում են 8,2%):

Ֆինանսների կառավարման փաստաթղթային հենքում առկա է ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ, որը սահմանում է ֆինանսների բաշխման անհրաժեշտ պայմանները, նպատակները, խնդիրները, սկզբունքները, որոնք իրենց բնույթով միտված են ՌԾ-ով սահմանված առաջնահերթությունների առաջնային ֆինանսավորմանը: ՌԾ-ով սահմանված կարևոր նպատակադրումները դուրս են մնացել ֆինանսավորման ուղղություններից:

Քոլեջը սահմանել է կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանզմներ, ըստ որի քոլեջի ֆինանսական միջոցները բաշխվում են ճիշտ և նպատակին՝ ըստ կազմված նախահաշվի: Նշված է, որ ձեռք են բերվում լաբորատոր նյութեր, գույք, սպասք՝ ըստ կաբինետ-լաբորատորիաների վարիչների պահանջագրերի: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տեխնոլոգիական մասնագիտությունների գծով գործնական պարապմունքներ իրականացնելու համար լաբորատորիաների նյութատեխնիկական, հումքային ռեսուրսների նախահաշիվ կազմելու համար ամբիոնների վարիչները պահանջագրեր չեն ներկայացնում: Ավելին՝ գործնական պարապմունքների համար նախատեսված անհրաժեշտ հումքը ուսանողներ են բերում, երբեմն էլ՝ դասախոսները:

Քոլեջում 2022-2023 ուստարվանից ներդրվել է «Լոգիստիկա» (Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում) մասնագիտությունը, որի համար ՀՀ ԿԳՄՄՆ-ն իջեցրել է ընդունելության 25 տեղ:

Փորձաքննության արդյունքները ցույց են տալիս, որ քոլեջի ռեսուրսները շատ սակավ են նոր մասնագիտություններ ներդնելու և զարգացնելու համար։

Քոլեջն ունի էլեկտրոնային հասցե և պաշտոնական կայքէջ։ Կայքէջը գտնվում է վերազինման փուլում և դեռևս տեղադրված ու հասնաելի չեն քոլեջի գործունեությանը վերաբերող փաստաթղթերը։ Առկա է «Mulberry» համակարգը, որով լիազոր մարմնի հետ ապահովվում է փաստաթղթաշրջանառությունը։

Քոլեջի շենքի մուտքում շուրջօրյա ռեժիմով հսկում են հերթապահ-պահակները, մուտքի մոտ թեքահարթակներ առկա չեն։ Տեղադրված է Շենգավիթ վարչական շրջանի օդային տագնապի շչակը, առկա են հակահրդեհային պաշտպանության սարքավորումները, կան տարհանման սխեմաներ։ 2020թ.-ից գործում է բուժկետ՝ անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով։ Համավարակի պայմաններում, ըստ անհրաժեշտության, հատկացվել են անհրաժեշտ տեխնիկական պարագաներ։

«Հանրային սննդի տեխնոլոգիա» կրթական ծրագրի համար նախատեսված լաբորատորիայում առկա են էլեկտրական գազօջախներ, գազի բալոն, որն անցնում է պարբերաբար ստուգում։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» ՄԿՇ-ի, քիմիայի և մանրէաբանության լաբորատորիաներն ապահովված են քարշիչ պահարաններով, որոնցից մի քանիսը բավականին հին են, սակայն ապահովում են ֆիզիկաքիմիական և մանրէաբանական փորձերի անցկացման անվտանգությունը։

Քոլեջում առկա են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ, որի արդյունքներով շենքային պայմանները բավարարում են ուսանողների 60,6%-ին, ջեռուցումը՝ 50,6%-ին, լսարանների կահավորումը՝ 58,8%-ին, լաբորատորիների նյութատեխնիկական հագեցվածությունը՝ 51%-ին։ Լավագույն ցուցանիշ է ապահովել գրադարանում առկա գրականությունից բավարարվածությունը՝ կազմելով 78,5%, իսկ վատագույն արդյունքը հետևյալն է՝ ուսանողների ընդամենը 16,6%-ն է բավարարված սանհագույցների կահավորումից։ Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի ուսանողների, դասախոսների համար ապահովված ռեսուրսային բազան հասանելի է։

Դատողություններ:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում լսարանային ֆոնդի սակավությունը, ոչ պատշաճ կահավորումը, կաբինետ-լաբորատորիաներում անհրաժեշտ սարքավորումների, պարագաների բացակայությունը։ Քանի որ լսարանները չեն բավականացնում, դասընթացներ են կազմակերպվում նաև համտեսի սրահում և գրադարանում, բացի այդ էլ՝ լսարանների քիչ լինելը դասախոսների և ուսանողների համար որոշակի դժվարություններ է առաջացնում

լրացուցիչ, խորհրդատվական, հետազոտական բնույթի աշխատանքներ կատարելու ընթացքում: Արդյունքում վտանգված է ՄԿԾ-ների ռեսուրսային բազայի ապահովվածությունը:

Փորձագիտական խումբը բացասական է գնահատում, որ քոլեջը չունի կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա մասնագիտության համար առանձին լաբորատորիա, ավելին՝ 3 տեխնոլոգիական մասնագիտությունների գծով գործնական պարապմունքները կազմակերպվում է գործող 1 լաբորատորիայում՝ այնտեղ առկա սակավ գույքով և ռեսուրսներով: Անհանգստացնող է, որ ծանրաբեռնված լաբորատորիայում տեխնոլոգիական մասնագիտությունների համար վերջնարդյունքներ ապահովող գործնական, լաբորատոր պարապմունքները հնարավոր չէ լիարժեքորեն կազմակերպել: Հավելելով՝ այդ մասնագիտությունների գծով գործնական պարապմունքներ իրականացնելու համար լաբորատորիաների նյութատեխնիկական, հումքային ռեսուրսների նախահաշիվ չկազմելու, պահանջագրեր չներկայացնելու պատճառով գործնական պարապմունքների համար նախատեսված անհրաժեշտ հումքը ձեռք են բերում ուսանողները, երբեմն էլ՝ դասախոսները: Փորձագիտական խումբ նաև իր մտահոգությունն ունի առ այն, որ խմորման արտադրության տեխնոլոգիայի, սարքավորումների լաբորատորիայում, ուր սարքավորումների մեծ մասը չեն շահագործվում և դուրս գրման ենթակա են, գործնական պարապմունքների ժամին իրականացվում է այդ սարքավորումների տեսադիտում՝ խոչընդոտելով գործնական հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը: Արդյունքում վտանգվում է քոլեջի տեխնոլոգիական ՄԿԾ-ների անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովվածությունը: Թերևս նման իրավիճակ ունենալու պարագայում փորձագիտական խմբի համար ուղղորդող և հուսադրող է փորձաքննության արդյունքում դուրսբերված այն փաստը, որ տեխնոլոգիական մասնագիտությունների ուսանողներն իրենց գործնական հմտությունները հիմնականում ձեռք են բերում պրակտիկաների ընթացքում, իսկ բարձր կուրսերի ուսանողները՝ նաև իրենց աշխատավայրերում:

Թեև 2017-2022թթ. ՌԾ-ով նախատեսված է կաթի և կաթնամթերքի լաբորտորիայի, գինեդարանի ստեղծումը, լաբորատորիաների վերազինումը, կաբինետ-լաբորատորիաներն անհարժեշտ գույքով, նյութերով ապահովելը, մարզադահլիճի վերանորոգումը, մինչդեռ 2017-2022թթ. ՌԾ-ն արդեն ավարտման փուլում է, իսկ նշյալ կարևոր նպատակները դեռևս չեն իրագործվել: Խոչընդոտվել է ռազմավարական պլանի կարևոր նպատակների իրագործումը:

Չնայած որ քոլեջն ունի ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ, իր գործունեությունն իրականացնելու համար ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեից, վերջին տարիներին ունի նաև դինամիկ աճ ապահովող արտաբյուջե, այդուհանդերձ քոլեջի համար առաջնահերթ է ընթացիկ ծախսերի

ֆինանսավորումը՝ ուղղված աշխատավարձի և հավելավճարների ֆոնդին, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգմանը, վարչական սարքավորումների ձեռքբերմանը, կոմունալ վճարներին, տրանսպորտային ծախսերին: Վերոնշյալը խոչընդոտում է ՌԾ-ով սահմանված կարևոր նպատակադրումների ֆինանսավորումը, քոլեջի հետագա զարգացումը:

Քանի որ քոլեջի ռեսուրսները շատ սակավ են նոր մասնագիտություններ ներդնելու և զարգացնելու համար, ուստի 2022-2023 ուստարվա համար պլանավորված «Լոգիստիկա» (Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում) մասնագիտության համար առկա է ռեսուրսային բազայով ապահովվածության ռիսկի բարձր մակարդակ՝ վտանգելով նոր ներդրված ՄԿԾ-ի արդյունավետ իրականացումը:

Անվտանգության տեսանկյունից փորձագիտական խումբը դրական է գնահատում առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների առկայությունը, լաբորատորիաների անվտանգությունը, չնայած որ հաշվի չեն առնվել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար թեքահարթակների անհրաժեշտությունը: Բուժկետը հագեցած է անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով:

Փորձագիտական խումբը նշում է՝ թեև քոլեջում առկա են ռեսուրսներից բավարարվածության գնահատումների որոշ հարցումներ, այնուամենայնիվ, այդ հարցումների արդյունքները գոհացուցիչ չեն, մասնավորաբար՝ ուսանողներն ընդհանուր առմամբ դժգոհություններ ունեն ջեռուցման համակարգից, հատկապես՝ մարզադահլիճի, լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությունից, սանհանգույցների կահավորումից: Դրան զուգահեռ, ուսանողները գոհունակություն են հայտնել գրադարանում առկա գրականության առկայությունից, համտեսի սրահի բարվոք վիճակից: Դրականորեն գնահատելով քոլեջի ռեսուրսային բազայի հասանելիությունը ուսանողների և դասախոսների համար, փորձագիտական խումբն ունի այն մտահոգությունը, որ առաջիկայում կրթական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսային բազայով ապահովելու ռիսկերի գնահատման և կառավարման անհրաժեշտություն է զգացվում, հակառակ պարագայում՝ էականորեն կարող է վտանգվել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացումը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ռեսուրսային բազան բարվոք վիճակում չէ, տեխնոլոգիական մասնագիտությունների համար լաբորատոր մասնագիտական լսարանները չեն նպաստում վերջնարդյունքներին համարժեք հմտությունների և կարողությունների ամբողջական ձեռքբերմանը,

ֆինանսական ռեսուրսների բաշխման հիմքում ընկած չեն ՌԾ նպատակադրումները, ընդհանուր առմամբ առկա է կրթական գործընթացն անհրաժեշտ ռեսուրսներով ապահովելու ռիսկերի գնահատման և կառավարման անհրաժեշտություն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը չի բավարարում չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է ***անբավարար:***

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում արտաքին և ներքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման նպատակը, մեթոդները կարգավորվում են «Շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ»-ով: Ըստ 2017-2022թթ. ՌԾ-ի՝ քոլեջի զարգացման ուղղություններից է նպաստել քոլեջի հասարակական պատասխանատվությունն իրականացնող մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, որոնցից են՝ հասարակության հետ կապերի ընդլայնումը, գովազդային հեռուստահաղորդումների հաճախականության ավելացումը, գործատուների և շրջանավարտների հետ կապերի ընդլայնումն ու ամրապնդումը:

Քոլեջում ձևավորված է ներքին հաշվետվողականության համակարգ: Յուրաքանչյուր ստորաբաժանում, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակից կիսամյակի սկզբում մշակում և ներկայացնում է աշխատանքային պլան, իսկ կիսամյակի վերջում ներկայացնում է հաշվետվություն: Հաշվետվություն են ներկայացնում նաև դասախոսները ամբիոնների վարիչներին, որոնք քննարկվում են մանկավարժական խորհրդում: Փաստաթղթերի վերլուծությունից պարզ

դարձավ, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին քոլեջի ուսումնական գծով փոխտնօրենը հաշվետվություն է ներկայացնում մանկավարժական խորհրդում, որում պետք է նշվեն նաև բարելավման ուղիների մշակման մեխանիզմները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինչպես աշխատանքային պլանները, այնպես էլ հաշվետվությունները տարեցտարի կրկնվում են, վերհանված խնդիրները չեն դառնում նոր պլանավորման հիմք, խնդիրների վերհանման և մշտադիտարկման մեխանիզմները միշտ չէ, որ արդյունավետ են: Դասախոսների համար հաշվետվության գործիք են անհատական մատյանները, որով ամեն կիսամյակի ավարտին իրականացվում են աշխատանքի վերլուծություններ (SWOT): Այդ մատյանները ներկայացվում են մանկավարժական խորհրդի նիստում, որից հետո վերլուծության դրական և բացասական արդյունքները՝ տնօրինական խորհրդում: Դասախոսների անհատական մատյանների վերլուծությունները նաև հնարավորություն են տալիս անհատական մենթորական աջակցություն տրամադրել սկսնակ դասախոսներին:

Տնօրինական խորհուրդը հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին՝ ֆինանսական, ստորաբաժանումների աշխատանքի, ուսումնական գործընթացի վերաբերյալ: ՊՈՀ-ի նախագահները ամփոփիչ ատեստավորումից հետո հաշվետվություն են ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը քննության արդյունքների և ուսանողների առաջադիմության վերաբերյալ: Քոլեջի տնօրենը և մի քանի աշխատակից դուալ համակարգի կազմակերպանն ու զարգացմանը միտված վերապատրաստման նպատակով Գերմանիայի Դաշնային Հանրապետություն կատարած այցի վերաբերյալ հաշվետվություն են ներկայացրել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ ներկայացնելով այն ձեռքբերումները և նորարարական գաղափարները, որոնք մտադիր են ներդնել քոլեջում:

Տարվա ընթացքում սահմանված ժամկետում քոլեջը հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարություն (Mulberry 2 փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգով), Ազգային վիճակագրական ծառայությանը, ՀՀ Ոստիկանությանը, ՀՀ հարկային ծառայությանը և այլ պետական գերատեսչություններ՝ ըստ անհրաժեշտության:
ՄՈՒՀ-ն ունի պաշտոնական կայքէջ http://www.agc.am/, ֆեյսբուքյան https://m.facebook.com/armgreek.college/, և ինստագրամյան https://www.instagram.com/accounts/login/?next=/arm_greek.college/ էջեր, որոնց միջոցով լուսաբանվում են քոլեջում տեղի ունեցող գործընթացները՝ միջոցառումներ, փառատոններ, համաժողովներ, պրակտիկաների անցկացում, ճանաչողական այցեր, բաց դասեր, հայտարարություններ և այլն: Քոլեջում գործող ՈՒԽ-ն և «Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոն»-ը սոցիալական ցանցերում ունեն իրենց առանձին էջերը, ինչպես նաև առկա է գործող

էլեկտրոնային հասցե: Ի տարբերություն սոցիալական ցանցերում ունեցած էջերի, կայքէջում դեռևս պարբերական թարմացումներ չեն արվում: Էջերի դիտարկումից պարզ դարձավ, որ ֆեյսբուքյանը բավականին ակտիվ է, առկա են հետադարձ կապի մեխանիզմներ (ուղղած հարցերին պատասխանում են արագ), իսկ ինստագրամյան էջը ավելի պասիվ է, հարցադիմումներին պատասխանում են չնորմավորված ժամկետում: Էլեկտրոնային փոստը հիմնականում ծառայում է պաշտոնական նամակագրության համար:

Կայքի ուսումնասիրումից պարզ դարձավ, որ այն վերազնիման փուլում է և դեռևս չի ծառայում որպես քոլեջի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը ապահովող մեխանիզմ, հաշվետվություններ տեղադրված չեն, սակայն առկա են Նորություններ և Արխիվ բաժինները, որտեղ տեղադրված է քոլեջի նախկին ձեռքբերումների և հաջողությունների մասին տեղեկատվություն: Քոլեջի կայքէջում տեղադրվում են ֆոկուս-խմբերի, բաց դասերի, միջոցառումների, համագործակցության պայմանագրերի կնքման, փոխադարձ այցերի վերաբերյալ տեղեկատվություն, սակայն այդ տեղեկատվության մեծ մասը ունի առնվազն 5 տարվա վաղեմություն:

Փաստաթղթերի ուսումնասիրութունից պարզ դարձավ, որ քոլեջն ունի բյուջեով նախատեսված ծախսեր գովազդների, բուկլետների տպագրման և կայք էջի վարման համար: Օրինակ՝ 2021 թվականի բյուջեի կատարողականով գովազդային ծախսերը կազմել են 707000 դրամ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տարբեր ԶԼՄ-ների հետ համագործակցությամբ իրականացվել են հարցազրույցներ, որոնց արդյունքում նաև լուսաբանվել է քոլեջի գործունեությունը:

Քոլեջն ունի հասարակության հետ հետադարձ կապի հաստատման քաղաքականություն, որում մշակված են հասարակության հետ հետադարձ կապի ապահովման նպատակները և դրական արդյունքի հասնելու համար կիրառվող մեխանիզմները: Վերջին երկու տարիներին Կարիերայի կենտրոնը տարեկան երկու անգամ իրականացրել է «բաց դռների» օրեր՝ մասնագիտական կողմնորոշման շրջանակներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բաց դռների օրերը միտված են աշակերտներին ներկայացնելու քոլեջում առկա մասնագիտությունները, հեռանկարները, աշխատաշուկայի պահանջները և այլն:

Քոլեջը սահմանել է արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները, որով նախատեսվում է հարցումների միջոցով վերհանել նրանց կարիքը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուների և շրջանավարտների շրջանում 2021-2022 ուստարում իրականացվել են հարցումներ՝ վերջիններիս կարիքների դուրս բերման նպատակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ

հարցումները հիմնականում վերլուծվել են, բայց խնդիրների վերհանման և դրանց լուծման հետագծերը տեսանելի չեն:

Քոլեջն իր գիտելիքները հասարակությանը փոխանցում է փառատոներին մասնակցելով, որտեղ ներկայացվում են ուսանողների կողմից պատրաստած հայկական ավանդական կերակրատեսակներ՝ մասնավորապես «Դդմի փառատոն», «Տոլմայի ամենամյա փառատոն», «Խորովածի ամենամյա փառատոն»: Այցից պարզ դարձավ, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողները մշակութային այցեր են կազմակերպել Հայաստանի տեսարժան վայրեր, ուսումնասիրել են հայրենի բնաշխարհի պատմամշակութային կոթողները և իրենց մասնագիտական հմտությունները կիրառել են որպես էքսկուրսավարներ: Քոլեջն իրականացնում է նաև կարճաժամկետ վերապատրաստումներ տարբեր շահառուների համար «Բարմեն», «Կարվինգ» և «Մատուցող» մասնագիտությունների գծով, սակայն ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, դրանք մշտական բնույթ չեն կրում:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջն ունի ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, որն առավել թափանցիկ և հաշվետվողական է դարձնում քոլեջի գործունեությունը: Դրական է, որ դասախոսներն անհատական մատյաններով ամեն կիսամյակի ավարտին իրականացնում են իրենց աշխատանքի վերլուծություններ՝ ներկայացնելով մանկավարժական խորհրդի նիստին: Վերլուծության դրական և բացասական արդյունքները քննարկվում են տնօրինական խորհրդում, որը կարող է էապես բարելավել դասախոսների հաշվետվողականության մեխանիզմը և մենթորական աջակցություն տրամադրել սկսնակ դասախոսներին:

Արտաքին հաշվետվողականությունը գործում է ըստ պահանջի, սակայն արտաքին շահակիցների, օրինակ՝ գործատուների առաջ քոլեջի հաշվետվողականությունը սահմանափակվում է ԿԽ-ում ընդգրկված գործատուներով: Արդյունքում քոլեջում առկա բոլոր ՄԿԾ-ների գործատուները չեն կարող բավարար մասնակցություն ունենալ քոլեջում տեղի ունեցող գործընթացներին:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը ակտիվ է սոցիալական ցանցերում, հիմնականում ֆեյսբուքյան էջում, տեղեկատվությունը տրամադրվում է հնարավորինս արագ: Փորձագիտական խումբը կարևորում է այն,

որ քոլեջն ունի նաև կայքէջ, չնայած նրան, որ վերջինս դեռևս լիարժեքորեն չի իրականացնում տեղեկատվության տրամադրման իր գործառույթը:

Գովելի է, որ հասարակությանը տեղեկատվության տրամադրման և գիտելիքի փոխանցման նպատակով քոլեջի բյուջետային միջոցների հաշվին տրամադրվում են ծախսեր՝ գովազդների, բուկլետների և տարբեր ԶԼՄ-ներով քոլեջի գործունեությունը լուսաբանելու համար: Վերոնշյալը նպաստել է քոլեջի ճանաչելիության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում նաև քոլեջում իրականացվող մասնագիտական կողմնորոշման և բաց դռների օրերի կազմակերպման գործընթացները, ինչի արդյունքում հասարակությունը տեղեկանում է քոլեջի գործունեության, մասնագիտությունների, աշխատաշուկայի զարգացման և առաջընթացների վերաբերյալ: Գովելի է այն փաստը, որ քոլեջը մասնակցում է ՀՀ-ում կազմակերպվող փառատոններին՝ տարածելով ազգային արժեքները, հայկական խոհանոցը, սովորույթները:

Հատկանշական է, որ քոլեջում իրականացվում են նաև կարճաժամկետ վերապատրաստումներ «Բարմեն», «Կարվինգ» և «Մատուցող» մասնագիտությունների գծով, որոնց պարբերաբար իրականացումը կնպաստի քոլեջի արտաբյուջեի կայուն ավելացմանը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը հիմնականում հաշվետվողական է պետական գերատեսչական, արտաքին և ներքին շահակիցների առջև, գործարկում է հասարակությանը գիտելիքներ փոխանցելու տարբեր մեխանիզմներ, ունի արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, տարածում է հայկական ազգային խոհանոցը տարբեր փառատոնների ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատվում է ***բավարար***:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը իր երկարաժամկետ ռազմավարական ծրագրում նպատակադրել է ընդլայնել արտաքին և միջազգային կապերը (2017-2022 թթ, երկարաժամկետ ռազմավարական ծրագրի 6-րդ նպատակ): Բացի այդ նշյալ ծրագրով կարևորվել է նաև արտաքին կապերի ընդլայնումը, նոր գործընկերների ձեռքբերումը: Սակայն 2020 թվականից ի վեր միջազգայնացման ուղղությամբ առաջընթաց չի գրանցվել: Միջազգային համագործակցության պայմանագրերը գործել են մինչև 2018 թվականը, այժմ չկան գործող պայմանագրեր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դրան նպաստել են համավարակը և պատերազմը: Այցից նաև պարզվեց, որ 2022 թվականից նախատեսում են վերսկսել փորձի փոխանակման գործընթացը Էստոնիայի և Ֆինլանդիայի հետ և կնքել համագործակցության պայմանագրեր:

2018 թվականին քոլեջում ստեղծվել է «Արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում պրակտիկայի կազմակերպման ընթացակարգ» փաստաթուղթը, ըստ որի արտասահմանյան երկրներում իրենց մասնագիտական/ նախաավարտական պրակտիկայի մեկնող ուսանողների ընտրության համար պետք է իրականացվի մրցույթ 3 փուլով: Նույն թվականին հաստատվել է նաև «Արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականություն» փաստաթուղթը: Միջազգային համագործակցության գործընթացները փաստաթղթավորումից հետո կասեցվել են՝ պայմանավորված համավարկով:

Քոլեջն ունի երկլեզու բուկլետ, իսկ կայքէջը նախատեսված է եռալեզու տարբերակով աշխատելու համար: Սակայն կայքէջը թերի է, օտար լեզվով միայն գլխավոր էջն է ներկայացված, իսկ մնացած բաժիններում օտար լեզվով նյութերը բացակայում են:

2014 թվականի փետրվարի 1-ից Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջում ստեղծվել է միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժինը, որը համակարգել է արտաքին կապերի ողջ գործընթացը: Բաժինն ունեցել

է աշխատակից, որը սկզբում վճարվել է արտաբյուջետային միջոցների հաշվին, այնուհետև՝ բյուջետային: 2020 թվականի հունվարի 22-ից շրջանառության մեջ մտած օրինակելի հաստիքացուցակում ընդգրկված չի եղել միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի պատասխանատուի հաստիքը, ինչի պատճառով 2020 թվականի սեպտեմբերից ստորաբաժանումն այլևս չի գործել: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը, Կարիերայի կենտրոնը և Պրակտիկայի բաժինը ակտիվ աշխատանքներ են տանում ընդլայնելու քոլեջի արտաքին համագործակցության շրջանակները:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը համագործակցում է տեղական մի շարք կառույցների հետ, որոնց հետ կնքել է պայմանագրեր: Պայմանագրերը հիմնականում պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ են: 2019-2022 թվականներին պրակտիկաների անցկացման համար կնքվել և վերակնքվել է շուրջ 129 պայմանագիր «Հանրային սննդի տեխնոլոգիա», «Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տենոլոգիա» , «Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն», «Գործավարություն օտար լեզվի խորացված իմացությամբ», «Զբոսաշրջություն»(այս ոլորտի բոլոր մասնագիտությունների համար ևս) և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիությունների համար: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանց մեծ մասի գործունեության ժամկետն ավարտվել է կամ ուղղակի չի գործում: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ տվյալ պահին 8 մասնագիտության գծով ունեն գործող 38 պայմանագիր: Դուալ ծրագրի ներդրման արդյունքում ավելացել են զբոսաշրջային կազմակերպությունների և հյուրանոցների հետ համագործակցությունների պայմանագրերը, սակայն դրանցից առավել գործունը երեքն են:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը 2011թ.-ից առ այսօր անդամակցում է AEHT-ին (European Association of Hotel And Tourism Schools), որտեղ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունից միակ և պաշտոնական ներկայացուցիչը: Այդ համագործակցությունը հնարավորություն է տալիս քոլեջին մասնակցել տարբեր ծրագրերի, սակայն ինչպես նշված է ԻՎ-ում, ծրագրերի սակավաթիվ լինելը դարձյալ կախված է ոչ բավարար ֆինանսական միջոցներից:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը համագործակցում է Գերմանական «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի հետ «Մասնագիտական կրթություն և

ուսուցում (ՄԿՈՒ) – համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում: Այդ համագործակցության շնորհիվ 2019 թվականից քոլեջում հիմնվել է “The Yummies” աշակերտական/ուսանողական ընկերությունը («Հանրային սննդի տեխնոլոգիա» և «Հացաթխման, մակարոնեղենի և հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտությունների ուսանողների ներգրավմամբ), իսկ 2021 թվականից AGC tour աշակերտական/ուսանողական ընկերությունը («Զբոսաշրջություն», «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում օտար լեզվի խորացված իմացությամբ» և «Սպասարկման կազմակերպում» մասնագիտությունների ուսանողների ներգրավմամբ), որի նպատակն է աշխատանքի վրա հիմնված ուսուցումը: Քոլեջը համագործակցում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերության՝ GIZ-ի հետ, որի շրջանակում մշակվել են 2 դուալ կրթական ծրագրերը, վերապատրաստվել են դասախոսները:

Քոլեջի դասախոսական կազմի և ուսանողության փոխանակման ծրագրեր դեռևս չեն իրականացվել, չկան համատեղ իրականացված ուսումնական ծրագրեր օտարերկրյա քոլեջների հետ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ 2022 թվականի օգոստոսին քոլեջի ուսանողական խումբը և հունարեն դասավանդող դասախոսը եղել են Հունաստանում, այցը կրել է մշակութային բնույթ: Քոլեջում չեն գործում ներքին շահակիցների օտար լեզուների իմացության մակարդակը բարձրացնելուն ուղղված մեխանիզմներ, դասախոսների շրջանում չեն իրականացվում օտար լեզվի՝ անգերենի դասընթացներ: Ուսանողների շրջանում օտար լեզուների իմացությունը (հիմնականում անգլերեն և ռուսերեն) սահմանափակվում է միայն համապատասխան առարկայի կամ մոդուլի դասավանդման շրջանակում: Դասախոսների շրջանում հիմնականում տարածված է ռուսերենի իմացությունը: Քոլեջում որոշ մասնագիտություններում կան ընտրովի և խորհրդակցական ժամեր պարսկերեն և հունարեն լեզուների ուսուցման համար:

Բացի այդ փորձագիտական այցի ընթացքում նաև պարզվեց, որ լեզվի իմացությունը ուսանողների շրջանում խնդիր է, և հաճախ աշխատանքի ընդունվելիս հենց դա է խոչընդոտ հանդիսանում: Ուստի այս ուղղությամբ քոլեջը նախատեսում է պահուստային ժամերի հաշվին ավելացնել օտար լեզվի դասավանդման ժամերը:

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը իր 2017-2022 թթ. երկարաժամկետ ռազմավարական ծրագրում կարևորում է զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի

ստեղծումը, սակայն մտահոգիչ է, որ ունենալով միջազգային համագործակցության փորձառություն, հնարավոր չի եղել գեներացնել առկա դրական փորձը:

Փորձագիտական խումբն արժևորում է, որ 2018 թվականին քոլեջում հաստատվել է արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը, առկա է արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում պրակտիկաների անցկացման ընթացակարգ, սակայն, համավարակով պայմանավորված, գործընթացները դադարեցվել են՝ կասեցնելով միջազգայնացումը: Միևնույն ժամանակ դրական է գնահատվում, որ 2022 թվականից սկսած քոլեջը փորձում է գործուն քայլեր իրականացնել միջազգային համագործակցության նոր ճանապարհներ գտնելու ուղղությամբ, որի արդյունքում հնարավոր կլինի դասախոսների և ուսանողների շրջանում ապահովել շարժունություն: Դրական է այն, որ քոլեջի բուկլետը և կայքէջը բազմալեզու են և տեխնիկապես լավարկման և վերազինման արդյունքում կարող են դառնալ միջազգայնացմանն ուղղված գործուն մեխանիզմ:

Գովելի է, որ 2014 թվականից քոլեջում ստեղծվել է միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ համակարգելով արտաքին կապերի ողջ գործընթացը, բաժինն ունեցել է աշխատակից: Քանի որ 2020 թվականին հաստատված օրինակելի հաստիքացուցակում նման հաստիք չի ընդգրկվել, ուստի 2020 թվականից այդ ստորաբաժանումն այլևս չի գործում: Արդյունքում այդ աշխատանքները որոշակի առումով իրականացնում են տարբեր ստորաբաժանումներ՝ նպաստելով արտաքին համագործակցության ընդլայնմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ առկա են տեղական կառույցների հետ կնքված մի շարք պայմանագրեր, սակայն դրանց մեծ մասը վերաբերում են պրակտիկաների կազմակերպմանը և գործուն չեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ դրանք գործարկելու պարագայում զգալիորեն կբարելավվի գործընկերային համագործակցությունը: Փորձագիտական խումբը կարևորում է համագործակցության արդյունքում ձեռքբերված պրակտիկաների անցկացման հնարավորությունները և գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացումը (Դուալ կրթական ծրագիրը), որի արդյունքում որոշ մասնագիտությունների գծով մեծ թվով ուսանողներ մինչև ավարտելը և ավարտելուց հետո աշխատում են իրենց մասնագիտությամբ ոլորտի առաջատար կազմակերպություններում՝ խթանելով զբաղվածության աճը:

Գովելի է այն, որ քոլեջը 2011 թվականից անդամակցում է AEHT-ին (European Association of Hotel And Tourism Schools), 2019 թվականից համագործակցում է

այնպիսի միջազգային ճանաչված կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ, ինչպիսիք են Գերմանական «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամը, Գերմանիայի Միջազգային Համագործակցության ընկերությունը (GIZ): Նման համագործակցության պահպանումը և զարգացումը առաջիկայում կարող է նպաստել նորարարական ծրագրերի ներդրմանը և իրագործմանը:

Մտահոգիչ է, որ աշխատանքի ընդունվելիս լեզվի իմացության մակարդակը խոչընդոտ է հանդիսանում, սակայն միևնույն ժամանակ դրական է գնահատվում քոլեջի միտումը ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման հարցում:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը կարևորում է արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված գործընթացները, այս ուղղությամբ ունի փորձառություն, համագործակցում է ոլորտի մի շարք ընկերությունների հետ, ունի համաձայնագրեր եվրոպական ճանաչված կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ՝ կրթական գործընթացներում նորարարական մոտեցումների ներդրման ուղղությամբ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը բավարարում է ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է ***բավարար***:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի որակի ապահովման փաստաթղթային հենքն առկա է՝ «Որակի ներքին ապահովման կառույցի կանոնակարգ (2018թ.)», «Որակի ներքին ապահովման համակարգի քաղաքականություն և ընթացակարգեր», «Ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը, ընթացակարգերը, պարբերաբար վերանայման մեխանիզմներն ու գործիքները»: Քոլեջը սահմանել է ՈՆԱ կառույցի նպատակը, այն է՝ քոլեջի առաքելությունների և նպատակների իրականացման համաձայն ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչների, ՊԿՉ-ներով ու համապատասխան ուսումնական ծրագրերով կարողություններին միտված մոդուլային ուսուցման իրականացումը և դրա շարունակական բարելավման մշակույթի ձևավորումը, խթանումը: Սահմանված են կառույցի գործառույթները:

Քոլեջն իր համար սահմանել է ՈՆԱ գործընթացների բարելավման և որակի մշակույթի ձևավորման համար իրականացվող շարունակական քայլեր, որոնցից են՝ բացահայտել քոլեջի ուսումնական, տնտեսական, մեթոդական խնդիրներն ու կարիքները, շարունակաբար կատարել հետազոտական, վերլուծական աշխատանքներ, աշխատանքները կազմակերպել ՊԻԳԲ շրջափուլի մեթոդով, մշտադիտարկել բոլոր գործընթացները և այլն (առկա է 30 պլանավորված գործողություն): Բացի այդ, նշված է գործառույթների շրջանակը, որով ՈՆԱ համակարգը նախատեսում է պարբերաբար վերանայել, մշտադիտարկել քոլեջի գործունեությունը: Առանձնացված են ըստ գործառույթների իրականացվող աշխատանքները, նշանակված են կատարողներ, առկա է կատարման ժամանակացույց, վերահսկող մարմին: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ընթացակարգերով սահմանված կարևոր գործողությունները հաճախ մնում են պլանավորման փուլում, կատարման վերաբերյալ առկա չեն քանակական և որակական վերլուծությունների ամփոփումներ, որոնք կներդրվեին հաջորդ գործընթացների պլանավորումների հիմքում և կապահովվեր ՊԻԳԲ շրջափուլի շարունակականությունը:

Ըստ հաստիքացուցակի քոլեջն ունի ՈՆԱ պատասխանատու, ով աշխատում է 1 դրույք ծանրաբեռնվածությամբ, ունի աշխատասենյակ: ՈՆԱ գործընթացներում ներգրավված են ներքին շահակիցներ և ընդհանուր աշխատանքները համակարգում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: Ֆինանսական ռեսուրսների պլանավորման տարեկան նախահաշվում ՈՆԱ գործընթացների կառավարման համար բյուջետային հատկացումներ առանձնացված չեն՝ միտված ՈՆԱ կառույցի գործառույթների

կատարելագործմանը: Կառույցը ֆինանսավորվում է քոլեջում գործող ընդհանուր սկզբունքներով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈՆԱ կառույցն ունի ուսումնասիրողի, գնահատողի, վերահսկողի, համակարգողի, կազմակերպողի, մշակողի և իրականացնողի գործառույթ, ինչը նաև ամրագրված է ՈՆԱ պատասխանատուի պաշտոնի նկարագրում: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ՈՆԱ պատասխանատուի պաշտոնի նկարագրում կան այնպիսի գործառույթներ, օրինակ ՝ կրթության որակի համար հաշվետվողականության ապահովում ներքին և արտաքին շահակիցների առջև կամ կրթության որակի ներքին չափանիշների և չափորոշիչների սահմանում՝ եվրոպական պահանջներին համահունչ, որոնք չեն իրականացվել ՈՆԱ պատասխանատուի կողմից: Բացի այդ, վերոնշյալ գործառույթների շրջանակը լայն է, վերաբերում է քոլեջի ողջ գործունեությանը: Այցի ընթացքում պարզվեց, որ ՈՆԱ պատասխանատուն երբեմն իրականացնում է այնպիսի գործունեություն, որն ամրագրված չէ ՈՆԱ կառույցի և իր գործառույթներում, մասնավորապես՝ ուսանողների շրջանում գիտելիքի ստուգման պատահական հարցումներ՝ գրավորների տեսքով:

Այցի ընթացքում փորձագիտական խումբը դիտարկել է ՈՆԱ կառույցի կողմից ներկայացրած ընդամենը մեկ տարվա ընթացքում իրականացված 12 հարցումներ իրենց վերլուծություններով, առկա են ըստ տարիների աշխատանքային պլանները, հաշվետվությունների փաթեթները: Վերլուծությունների ամփոփում- բարելավումների պլան կապն իրատեսական չէ, բարելավումները, որպես նոր պլանավորումներ, չեն դիտարկվում ծրագրային փաստաթղթերում, հավաքագրված տվյալների գործողության արդյունավետությունը տեսանելի չէ: Հարկ է նշել, որ ՈՆԱ գործընթացներում հիմնական կողմնորոշիչ գործիքը հարցումներն են, որպես այդպիսիք՝ այլ մեխանիզմներ չեն գործարկվում:

ՈԱ գործընթացներում ներքին շահակիցներից ներգրավված են ուսանողները՝ ուսանողական հանձնաժողովում, վարչական և մանկավարժական աշխատողները՝ վարչադասախոսական հանձնաժողովում, իսկ արտաքին շահակիցներից գործատուների և շրջանավարտների հետ կապը սահմանափակվում է հարցումների իրականացմամբ: Փորձագիտական այցի ժամանակ հարցումների պարբերականությունը չարձանագրվեց, փորձագիտական խումբն ուսումնասիրել է ընդամենը 2021-2022 ուստարվա հարցումները և դրանց վերաբերյալ առկա որոշ վերլուծությունները: Ըստ քոլեջում գործող կարգի ՈՆԱ հանձնաժողովները մշտադիտարկում, վերահսկում են քոլեջի բոլոր գործառույթները, բացահայտում կարիքները և ապահովում են որակյալ

համակարգված, կանոնակարգված աշխատանք, սակայն վերջիններս հիմնականում մասնակցել են ինքնավերլուծությանը, ՈՆԱ գործընթացները անցել են պլանավորման և իրականացման մեկ փուլ, ուստի համակարգի գնահատում և բարելավում դեռևս չի իրականացվել:

Ըստ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ԻՎ-ի՝ 2015 թվականից սկսած քոլեջում հավաքագրվել են ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համար անհրաժեշտ փաստաթղթերը, ձևավորվել է ՈՆԱ կառույց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՆԱ պատասխանատուն աշխատում է այդ պաշտոնում 2021 թվականից: Թե՛ նախնական գնահատման, թե՛ փորձագիտական այցի ընթացքում 2021 թվականից առաջ իրականացված գործընթացները ընդհանուր առմամբ չեն ներկայացվել փորձագիտական խմբին, առկա չեն 2015-2021 թվականներին իրականացված գործընթացների վերլուծություններ, վերհանված խնդիրներ: Մեկ տարվա ընթացքում ստեղծվել է 12 անուն հարցում՝ «2018-2022 թթ. քոլեջում իրականացված բարեփոխումների գնահատում դասախոսների կողմից», «Ուսանողների բավարարվածության գնահատում քոլեջում առկա ռեսուրսներից, մարզական և մշակութային ծրագրերից», «Գործատուների կողմից ուսանող-պրակտիկանտներից գոհունակության գնահատման», «Շրջանավարտների կողմից կրթական ծրագրերի գնահատման», «Դասընթացի գնահատման», «Հետազոտական աշխատանքների գնահատման հարցաշար դասախոսների համար», «Հետազոտական աշխատանքների գնահատման հարցաշար ուսանողների համար», «Կարիերայի ստորաբաժանման աշխատանքների գնահատման», «Պրակտիկայի արդյունքների ուսումնասիրություն», «Ձեր կարծիքը վերապատրաստման վերաբերյալ», «Գոհունակություն ստորաբաժանումների աշխատանքից», «Դասախոսների ուսումնական գործունեության վարկանիշային թերթիկ» երկու կիսամյակների համար:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ օրինակ՝ «Գոհունակություն ստորաբաժանումների աշխատանքից» հարցման հարցաթերթիկում հարցադրումները բացի այն, որ անձնավորված են, գնահատականներն էլ հստակ չեն՝ ում են վերաբերում: Բացի այդ կան ստորաբաժանումներ, որոնցում պատասխանատու են երեք անձ, սակայն հարցման ձևաչափը չի առանձնացնում վերջիններիս, գնահատումը դառնում է ընդհանրական, տեսանելի չեն դուրս բերված խնդիրները: Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ հարցադրումները թիրախային չեն և առկա չեն դրանց վերլուծության արդյունքում վերհանված խոշոր խնդիրները: Ինչ վերաբերում է հարցադրումների արդյունքում կատարված առաջարկություններին,

ապա դրանք խիստ ընդհանրական են, անձնային, չկան ամփոփումներ: Գործատուների կողմից ՄԿԾ-ների հետ կապված որոշ առաջարկներ հաշվի են առնվել և ներառվել են ուսպլաններում, սակայն թիրախային շատ ռազմավարական խնդիրների շուրջ չկան բարելավման ծրագրեր:

2017 թվականին քոլեջն իրականացրել է ինքնավերլուծություն 10 չափանիշով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նախորդ ԻՎ-ն հիմք է հանդիսացել նոր՝ 2022 թվականի ԻՎ-ի համար: ԻՎ-ն ընդհանուր առմամբ նկարագրողական է, տվյալների հավաքագրման մեխանիզմները տեսանելի չեն, ներկայացված որոշ թվային վերլուծություններ չունեն փաստացի հիմքեր:

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է քոլեջի կայքէջում, ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում: Սակայն էջերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ կայքը դեռ վերազինման փուլում է, քոլեջի ՈՆԱ գործընթացների մասին չի տրամադրում տեղեկատվություն, կայքում փաստաթղթերի համար չկա առանձնացված էջ, իսկ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը լուսաբանում են քոլեջի առօրյան, տեղադրվում են հայտարարություններ:

Դատողություններ:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ թեև քոլեջը մշակել է ՈՆԱ գործընթացները համակարգող և կանոնակարգող փաստաթղթեր՝ համապատասխան գործողություններով ու գործառույթներով, այդուհանդերձ քոլեջի կողմից սահմանված ՈՆԱ գործընթացների բարելավման և որակի մշակույթի ձևավորման համար շարունակական քայլերը հաճախ մնում են պլանավորման փուլում՝ չունենալով կատարողականներ և դրանց վերաբերյալ վերլուծությունների ամփոփումներ: Արդյունքում վտանգվում է ՈՆԱ գործընթացների գնահատման արդյունավետությունը:

Չնայած որ քոլեջն ունի ընդհանուր սկզբունքներով ֆինանսավորվող ՈՆԱ կառույց իր պատասխանատուով, ՈՆԱ գործընթացներում ներգրավված են ներքին շահակիցներ, այդուհանդերձ մտահոգիչ է, որ ՈՆԱ պատասխանատուի գործառույթներն ընդգրկուն են և վերաբերում են քոլեջի ողջ գործունեությանը: Նշյալ համատեքստում անհանգստացնող է նաև, որ ՈՆԱ պատասխանատուն երբեմն իրականացնում է իր գործառույթների շրջանակից դուրս գործունեություն: Ուստի վտանգվում է ՈՆԱ գործընթացների արդյունավետությունը:

Թեև ՈՆԱ կառույցում առկա են մեկ տարվա կտրվածքով տարբեր հարցումների փաթեթներ իրենց վերլուծություններով, ըստ տարիների

աշխատանքային պլանների, հաշվետվությունների փաթեթներ, այդուհանդերձ վերլուծությունների ամփոփում-բարելավումների պլան կապն իրատեսական չէ, բացի այդ բարելավումները պլանավորումների տեսքով չեն ընդգրկվում ծրագրային փաստաթղթերում՝ վտանգելով հավաքագրված տվյալների կիրառման արդյունավետությունը:

Թեկուզև քոլեջի ՈՆԱ որոշ գործընթացներում ներգրավված են ներքին շահակիցներ՝ մասնավորապես ուսանողներ, դասախոսներ, սակայն միևնույն ժամանակ անհանգստացնող է, որ արտաքին շահակիցներից՝ գործատուների և շրջանավարտների առնչությունը ՈՆԱ գործընթացներին սահմանափակվում է հարցումներով: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի կողմից ներկայացված միայն մեկ ուստարվա հարցումների արդյունքներով հնարավոր չէ դիտարկել իրականացված գնահատումների պարբերականությունը և արդյունավետությունը՝ վտանգելով անհրաժեշտ բարելավումների իրականացումը:

Թեև, քոլեջի պնդմամբ, ՈՆԱ գործընթացները մեկնարկել են 2015 թվականից, ձևավորվել է կառույց, սակայն մտահոգիչ է, որ 2015-2021 թթ. ներառող ժամանակահատվածի համար ներկայացված չեն ՈՆԱ գործընթացների իրականացումը հավաստող փաթեթներ: Վտանգվում է ՈՆԱ գործընթացների արդյունավետության գնահատման շարունակականությունը: Դրական է, որ մեկ տարվա ընթացքում ձևավորվել է 12 անուն հարցում, սակայն հարցումների վերլուծության արդյունքում տեսանելի չեն վերհանված խոշոր թիրախային խնդիրները: Անհանգստացնող է, որ հարցադրումների արդյունքում կատարված առաջարկությունները խիստ ընդհանրական են, անձնային, չկան ամփոփումներ՝ խոչընդոտելով քոլեջի համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրների դուրսբերմանը և տեղայնացմանը:

Դրական է, որ քոլեջի գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է սոցիալական հարթակներում, չնայած որ ՈՆԱ գործընթացների մասին տեղեկատվություն առկա չէ: Կայքէջի վերազինման արդյունքում էականորեն կբարելավվեն ինչպես քոլեջի ընդհանուր գործունեության, այնպես էլ ՈՆԱ գործընթացների լուսաբանումը:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ՈՆԱ գործընթացները շարունակական չեն, գտնվում են պլանավորման և կատարման փուլում, տվյալների հավաքագրման մեխանիզմները սահմանափակ են, հարցման արդյունքներով տեսանելի չեն վերհանված խոշոր խնդիրները, առկա չեն խնդիրների լուծման թիրախային հետագծեր, բարելավումները պլանավորումների տեսքով չեն

ընդգրկվում ծրագրային փաստաթղթերում, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջը չի բավարարում ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է ***անբավարար***:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Չի բավարարում
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում



Արմենուհի Մհերյան

Փորձագիտական խմբի ղեկավար

05.12.2022

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմենուհի Միերյան- 2000թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Ֆինանսահաշվային ֆակուլտետի, ֆինանսներ և վարկ մասնագիտությունը, 2004թ. եղել է նույն բուհի «Ֆինանսներ և վարկ» ամբիոնի ասպիրանտ: Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ է: 2006–2021թ. աշխատել է ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոնի դասախոս: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների՝ Տվյալների մշակումը, վիճակագրական վերլուծությունը և ներկայացումը SPSS վիճակագրական փաթեթի միջոցով, Training on capacity building for implementing bologna reforms, «Տեղեկատվական համակարգերի տիրապետում և կատարելագործում», «Ֆինանսական հաշվառում, վերլուծություն և աուդիտ», «Տնտեսամաթեմատիկական մեթոդների և մոդելների յուրացում և կիրառում» և այլ թեմաներով: 2022թ.-ից աշխատում է Եվրոպական համալսարանում որպես «Կառավարում» ամբիոնի դասախոս:

Քրիստինե Հակոբյան- 2004 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությունը (մագիստրոս)՝ մեթոդիստ որակավորմամբ: 2015 թ. մասնակցել է ՀՀ ԳԱԱ հետևյալ հեռավար դասընթացներին՝ «Տուրիզմի հիմունքներ»՝ Տուրիզմ մասնագիտությունը, «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն»՝ Մշակույթի մասնագիտություն, «Մարդկային ռեսուրսների կառավարում»: 2005 թ.-ից առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես աշխատակազմի ղեկավար և Տուրիզմի դասախոս: Հեղինակել է՝ մասնագիտական ուսումնական 3 ձեռնարկ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տեղակալների վերապատրաստող է: Մասնակցել է տուրիզմի ոլորտի միջին մասնագիտական 2 ՊԿՉ-ի մշակման և 3-ի վերանայման աշխատանքներին:

Աննա Դաշտոյան- 1997 թ-ին գերազանցությամբ ավարտել է Հայկական Գյուղատնտեսական ակադեմիա, ստացել Մսի և մսամթերքի ինժեներ տեխնոլոգի որակավորում:1998թին ընդունվել է ՀՊԱՀ ասպիրանտուրա:2008թ-ին ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի որակավորում: 2010 թ-ին ստացել է դոցենտի կոչում: 1997-2004-ից աշխատել է Հայկական Գյուղատնտեսական ակադեմիայի Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի

ամբիոնում որպես լաբորանտ։ 2004-2010թ-ին աշխատել է նույն ամբիոնում որպես ասիստենտ։2010թ-ից առ այսօր աշխատում է Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնում որպես դոցենտ։

Ավետիք Խոստեղյան- 2022 թ.-ին ավարտել է Գեղարքունիքի մարզի ք. Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի հաշվապահական հաշվառում բաժինը։ Այժմ սովորում է Եվրասիա միջազգային համալսարանի կառավարում բաժնի 2-րդ կուրսում։ 2021թ.–ին մասնակցել է ՈԱԱԿ–ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող–փորձագետների վերապատրաստմանը։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	09.09.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1.	Ռեսուրսների դիտարկում	16:00	17:30	90 րոպե

	12.09.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:00	12:40	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում շրջանավարտների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	15:20	16:20	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	13.09.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Դասալսումներ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ամբիոնների վարիչների և մեթոդիստի հետ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում ուսանողների (10-12 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե
7	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	16:30	17:10	40 րոպե
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:20	19:00	100 րոպե

	14.09.2022թ.		*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում «Զբոսաշրջություն», կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	Հանդիպում «Հանրային սննդի տեխնոլոգիա», և «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Զբոսաշրջություն», կրթական ծրագրերի դասախոսների հետ	Հանդիպում «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրերի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերի ուսանողների հետ	Հանդիպում «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» կրթական ծրագրերի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ		13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ /Ուսումնական մասի վարիչ, մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատու, պրակտիկայի բաժնի վարիչ, գրադարանավար, կաբինետների և		14:20	15:20	60 րոպե

	լաբորատորիայի վարիչ, հաշվապահ, կադրերի բաժնի վարիչ/			
6	Բաց հանդիպում	15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:35	18:35	120 րոպե

	15.09.2022 թ.	***Մեկնարկ***	***Ավարտ***	***Տևողություն***
1	Հանդիպում Որակի ապահովման բաժնի աշխատակցի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:40	60 րոպե
3	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:10	16:10	120 րոպե
6	Հանդիպում ղեկավար կազմի հետ	16:30	17:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Մինչև 2018 թվականը իրականացված ինքնավերլուծություն	1
2.	Կառավարման և տնօրինական խորհրդի արձանագրություններ	1
3.	Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները նկարագրող հիմքեր	1
4.	Նախորդ ՌԾ-ի կատարողական/5 տարվա վերլուծություն/	1
5.	Արտադրական պրակտիկաների աշխատանքների գծով տեղակալի, պրակտիկայի բաժնի վարիչի պաշտոնի անձնագեր	2
6.	Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
7.	Դասալսումների մատյաններ /ամբիոններից մեկական/	2
8.	Ուս. աշխ. գծով տեղակալի, ՈԱ պատասխանատուի 2018թ.-ից գրավոր կարծիքները՝ կիսամյակային հաշվետվությունների մշտադիտարկման վերաբերյալ	2
9.	2018թ.-ից ՈԱ պատասխանատուի եզրակացությունները ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ	2
10.	Իրականացված SWOT ինքնավերլուծություններ	2
11.	Դիմորդ- տեղեկատուի օրինակ	2
12.	Տնօրենի տարեկան հաշվետվությունները կառավարման խորհրդին/ֆինանսական/	2
13.	Ավարտական աշխատանքների օրինակներ/բոլոր ՄԿԾ-ներից/	3
14.	Դասի վերլուծություններ /ՄԿԾ-ի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների հղմամբ ներկայացված ձևաչափով/	3
15.	Ուսանողների, դասախոսների շարժունության վերաբերյալ տեղեկատվություն՝ ըստ տարբեր տարիների	3
16.	Լոգիստիկա կրթական ծրագրի փաթեթ	
17.	Գործատուների կարծիքները ՄԿԾ-ների վերաբերյալ	3
18.	Առաջադրանքներ տարբեր կրթական ծրագրերից	3
19.	Ընդունելության արդյունավետության վերլուծությունները վերջին 3 տարիների համար	4
20.	Ընդունող հանձնաժողովի նիստերի արձանագրություններ	4

21.	Կուրսղեկների հաշվետվություններ	4
22.	Ուսանողներին առնչվող հարցումների վերլուծություններ	4
23.	ՈւԽ աշխատանքային պլան, կազմ, նիստերի ժամանակացույց, արձանագրություններ	4
24.	Ուսանողների զբաղվածությանն առնչվող վերլուծություններ	4
25.	Անհատական և խմբային հետազոտական աշխատանքերի փաթեթ 3 ՄԿԾ-ների գծով	4
26.	Շրջանավարտների շրջանում իրականացված հարցումների վերլուծություններ	4
27.	Տարիֆիկացիա/դասախոսական կազմի/ 2021-2022	5
28.	Վերջին տարիներին վերապատրաստված դասախոսների ցանկ /բացի ՄԿՈՒԶԱԿ-ից/	5
29.	Մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ	5
30.	Դասախոսների գնահատման արդյունքների ամփոփումներ	5
31.	Դասախոսների անհատական, մանկավարժամեթոդական աշխատանքների գրառումների ***լրացված*** մատյաններ՝ 3 ՄԿԾ-ների գծով, մատյանների վերլուծություններ /ԻՎ-ում գրված է, որ կատարվում են վերլուծություններ/	5
32.	Միանվագ դրամական պարգևատրումներ, լրացուցիչ վճարովի արձակուրդ ստացած դասախոսների ցանկ	5
33.	Դասալսման արձանագրություններ	5
34.	Դասալսումների ժամանակացույց	5
35.	Հաշվետվություններ եվրոպական քոլեջների լավագույն փորձի վերաբերյալ/2004 թ./	5
36.	Դասավանդողների կատարելագործման պլաններ՝ 3 ՄԿԾ-ների գծով	5
37.	Հաստիքացուցակ 2021թ.	5
38.	2021 թվականի բոլոր դասախոսների կիսամյակային մեթոդական աշխատանքների թեմաները	6
39.	Մեթոդական աշխատանքների ցանկ	6
40.	Պրակտիկայի հաշվետվություններ, օրագրեր	6
41.	Դասախոսի հաշվետվություն, անհատական մատյան, աշխատանքային պլան	8

42.	Հետադարձ կապի մեխանիզմներով հասարակության կարծիքների և պահանջների վերլուծություններ	8
43.	Համագործակցության պայմանագրեր տեղական և միջազգային գործընկերների հետ	9
44.	Իրականացված հարցումների վերլուծություններ	10
45.	Հարցաթերթերի օրինակներ/ներքին և արտաքին շահակիցներին առնչվող/ չլրացված օրինակներ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Լսարաններ
- Գրադարան
- Արխիվ
- Համտեսի և հանդիսությունների սրահ
- Բուժկետ
- Համակարգչային լսարան
- Խմորման արտադրության լաբորատորիա
- Հանրային սննդի լաբորատորիա
- Քիմիայի լաբորատորիա
- Մանրէաբանության և կենսաբանության լաբորատորիա
- Ֆիզկուլտուրայի դահլիճ
- ՆԶՊ կաբինետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԱԱՑ- գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ
ԿԳՄՍ նախարարություն- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԶԾ - զարգացման ծրագիր
ԿԽ - կառավարման խորհուրդ
ՄԿԾ- մասնագիտության կրթական ծրագիր
ՄԿՈՒ- Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄՈՒՀ- մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ- որակի ապահովում
ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱՇ- որակավորումների ազգային շրջանակ
ՌԾ- ռազմավարական ծրագիր
ՈՒԽ- ուսանողական խորհուրդ
ՈՒՕ կազմ-ուսումնաօժանդակ կազմ
ՊԿՉ- պետական կրթական չափորոշիչ